Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

30(353)
30.09.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԱՅՍՏԵՂ ԻՐԱՊԵՍ ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ՀՈԳԻ

Անշուշտ, շատ դժվար կլիներ արցախցիների վիճակը, հատկապես ազատագրական պատերազմի դժնդակ տարիներին, եթե չլիներ սփյուռքահայության աջակցությունը: Թե՛ ռազմագործողություններին ուղղակի մասնակցությամբ և թե՛ նյութական ու բարոյական օգնությամբ Սփյուռքի մեր եղբայրներն ու քույրերը մեզ զորավիգ եղան Արցախյան գոյապայքարի բոլոր փուլերում:

Այժմ, տևական հրադադարի պայմաններում, երբ մեր ամենօրյա ջանքերն ուղղված են պետության լիարժեք կայացմանն ու զարգացմանը, դարձյալ զգալի է Սփյուռքի գործուն աջակցությունը: Այն դրսևորվում է երկրի կենսագործունեության բոլոր բնագավառներում՝ տնտեսություն, շինարարություն, առողջապահություն, կրթություն, մշակույթ...

Սեպտեմբեր ամիսն այս առումով թերևս ընդգծված էր, քանզի բարեգործական նախաձեռնություններն ինչպես ասում են՝ պտուղ տվին միանգամից մի քանի ոլորտներում: Դեռևս ամսվա սկզբին հանդիսավոր պայմաններում շահագործման հանձնվեց «Դենտեքս Դենտալ Գրուպ» ընկերության ստոմատոլոգիական կլինիկան, հաջորդ օրը «Լուդինգ» ընկերության հիմնադիր-նախագահ Արթուր Վարժապետյանի կողմից հանդիսավոր պայմաններում առողջապահության գերատեսչությանը հանձնվեց երկու ռեանիմոբիլ և շտապ օգնության չորս գծային ավտոմեքենա:

Համայն հայության համար Արցախի խորհրդանիշ համարվող «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանն իր վերածնունդն ապրեց շրջակա տարածքի բարեկարգման շնորհիվ, որն իրականացվեց ծննդով ստեփանակերտցի, մոսկվաբնակ բարերար Կարեն Ավագումյանի միջոցներով: Իսկ սեպտեմբերի 24-ին, Ստեփանակերտում տեղի ունեցավ վաղուց սպասված իրադարձությունը՝ բացվեց «Տաշիր» խմբի ընկերությունների նախագահ, ռուսաստանաբնակ մեծ բարերար Սամվել Կարապետյանի հովանավորությամբ կառուցված Հանրապետական բժշկական կենտրոնը:

Ուշագրավ էր նաև սեպտեմբերի 26-ին Արցախի մայր բուհում մեկնարկած ծրագիրը, ըստ որի՝ առաջիկա չորս տարում 100.000 ԱՄՆ դոլարի ֆինանսական աջակցություն պետք է ցուցաբերվի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետում դեռևս մեկ տարի առաջ բացված՝ «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտության կայացմանը:

Արժանին մատուցելով բոլոր բարեգործներին՝ հայրենանվեր ձեռնարկումների համար, նշենք, որ միայն բարեսիրական նախաձեռնությունների վիճակագրական աճը չէ տվյալ դեպքում հաղթանակների առհավատչյան, խիստ կարևոր է նաև այն, որ Արցախն իր շուրջն է համախմբել աշխարհի տարբեր ծագերում ապրող իր լավագույն զավակներին ու նրանց նվիրյալ մասնակցությամբ շենացնում է երկիրը:

Տեղին է հիշել Հանրապետական բժշկական կենտրոնի բացման հադիսավոր արարողության ժամանակ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի արտահայտած այն միտքը, թե այստեղ ներդրվել է հոգի: Այո, միայն հոգի ներդնելով են երկիր կառուցում ու այն պաշտպանում: Եվ դա արդեն դարձել է արցախանպաստ մեր բոլոր նախաձեռնությունների հիմնակետը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԾՐԱԳԻՐԸ ՄՏԱՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ

Մեկ տարի առաջ Արցախի պետական համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետում բացվեց «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտությունը:

Սեպտեմբերի 26-ին մայր բուհում վավերացվեց մի ծրագիր, որի նպատակը նշված մասնագիտության կայացման ու զարգացման ապահովումն է: Այդ նպատակով ժամանել էր ԱՄՆ-ում հիմնադրված «Հայ կրթական հիմնարկություն» բարեգործական կազմակերպության ներկայացուցչական խումբը: Միջոցառմանը ներկա էր ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Հայ կրթական հիմնարկությունը» չորս տարվա կտրվածքով 100 հազար ԱՄՆ դոլարի ֆինանսական աջակցություն պետք է ցուցաբերի վերոնշյալ մասնագիտությանը, այդ թվում՝ ուսանողներին կրթաթոշակի տրամադրում, դասախոսներին աշխատավարձով ապահովում, նյութատեխնիկական բազայի ամրապնդում:

«Ծրագիրը մեծ նշանակություն ունի ոչ միայն Արցախի մայր բուհի, այլև երկրի գիտակրթական ոլորտի հետագա զարգացման համար: Արցախի պետական համալսարանը նախանձախնդիր է իր ուսանողներին ժամանակակից պահանջներին համապատասխան որակյալ կրթություն տալու հարցում և այս ուղղությամբ պարբերաբար միջոցառումներ է ձեռնարկում: Գաղտնիք չէ նաև, որ մեր հանրապետության աշխատաշուկայի պահանջված մասնագիտություններից է կառավարման տեղեկատվական համակարգերը, ինչն էլ գալիս է հիմնավորելու մեր այսօրվա մեկնարկվող ծրագրի արդիականությունն ու կարևորությունը»,- ողջույնի և շնորհակալանքի իր խոսքում ասաց ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը՝ համոզմունք հայտնելով, որ այն հաջող ընթացք ու շարունակականություն կունենա:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, ողջունելով ամերիկահայ բարերարների հերթական այցն Արցախ, արժևորեց «Հայ կրթական հիմնարկության» մեծ առաքելությունը հանրապետության կրթական համակարգի զարգացման գործում՝ մատնանշելով անուններ. Հակոբ և Մինա Շիրվանյաններ, Թուֆենկյաններ, Հակոբ Բաղդասարյան և էլի շատեր, ովքեր մեծ ներդրում ունեն Արցախում: Կազմակերպությունը բազում ծրագրեր է իրականացրել ոլորտում՝ դպրոցաշինություն, գույքով ապահովում, կրթաթոշակների և տարաբնույթ օգնությունների տրամադրում: Նախարարը շնորհակալություն հայտնեց այս ամենի, ինչպես նաև բարոյական մեծ աջակցության համար: «Ղարաբաղցին երբ տեսնում է, որ Սփյուռքն իր հետ է, ավելի է ոգևորվում: Արցախը հաղթանակեց մեր միասնության շնորհիվ, ու այսօր էլ պետք է այդ հաղթանակն ամրապնդվի նույն ձևով: Պայքարը, ինչի արդյունքում Արցախն այսօր ազատ ու անկախ է, իզուր չի եղել: Դա համայն հայության հաղթանակն է, և այն հարկավոր է ամրապնդել, որպեսզի Արցախի ժողովուրդը կարողանա իր հողում ապրել, ստեղծագործել և որպես պետություն զարգանալ, ինչը կբերի նրա միջազգային ճանաչմանը: Չնայած կարևորն այն է, որ մենք մեզ այդպիսին ենք համարում: Իսկ դուք այցելելով Արցախ, տեսնելով ձեր բարեգործության պտուղները՝ ամեն անգամ նոր դրական լիցքեր եք տանում ձեզ հետ»,- ասաց Սլավա Ասրյանը՝ երախտագիտություն հայտնելով բարերարներին և բարի երթ մաղթելով ծրագրին:

«Հայ կրթական հիմնարկության» նախագահ Հերմինե Փախանյանը իր հերթին շնորհակալություն հայտնեց ԱրՊՀ-ին՝ ծրագրի կայացմանը գործուն պատրաստակամություն ցուցաբերելու համար՝ ասելով, որ «Հայ կրթական հիմնարկության հետ մեկտեղ գործում է նաև «Գիտական, կրթական և մշակույթի զարգացման կազմակերպությունը», և երկուսով համագործակցելու են ԱրՊՀ-ի հետ, որպեսզի ուսանողներին հաջողությամբ բակալավրական կրթության հասցնեն: «Մենք գիտենք, որ Սփյուռքը գոյություն չունի առանց հայրենիքի, և ուզում ենք միշտ օգտակար լինել մեր հայրենիքին: Մենք ուզում ենք մեր եկող սերունդներին շատ ավելի լավ հանձնել մեր հայրենիքը»,- ասաց նա:

Ճարտարագիտական ֆակուլտետի դեկան Գագիկ Բաղունցն ուրախություն հայտնեց, որ իրականանում է իր վաղեմի երազանքը. 20 տարի առաջ, երբ դեռ պատերազմ էր Արցախում, և Սփյուռքի մեր հայրենակիցները օգնություն էին բերել՝ զինամթերք ու սննդամթերք, նա մի միտք է արտահայտել, թե երբ կգան այն ժամանակները, որ սփյուռքահայերի օգնությունը լինի ոչ թե սննդամթերքի ձևով, այլ գիտելիքի, գրքերի (այն ժամանակ համակարգիչ չկար): «Ես անչափ ուրախ եմ, որ այդ պահն արդեն իրականացավ: Ինչպես Աստվածաշունչն է ասում՝ մի տվեք մեզ ձկներ, այլ սովորեցրեք մեզ ձուկ բռնել: Ձեր օգնությամբ մենք կարող ենք պատրաստել երիտասարդների մի սերունդ, որը կարող է այն ամեն ինչը, որ դուք որպես օգնություն բերում եք Ղարաբաղ, ստեղծել այստեղ, և իրենք էլ հեռուներում ապրող մեր կարիքավոր հայրենակիցներին օգնության ձեռք մեկնեն»,- ասաց նա:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»-Ը՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Օրերս ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հյուրն էր ՀՀ ԿԳՆ «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գագիկ Մինասյանը: Նախարար Սլավա Ասրյանի մոտ հանդիպմանը ներկա էին փոխնախարարները, «Լուսարար» թերթի խմբագիրը: Ս. Ասրյանը ողջունեց հայաստանյան համասեռ կառույցի խոսափողը հանդիսացող թերթի խմբագրապետի այցը և նրա կողմից իր հեղինակած *«100 խմբագրական. Հայեցի դաստիարակության գաղափարական նմուշներ»* ժողովածուն Արցախի հանրակրթական դպրոցներին նվիրելու ցանկությունը: Հանդիպման ընթացքում շոշափվեցին թերթ-դպրոց-ընթերցող համագործակցության հետագա ծրագրերը: Մասնավորապես արծարծվեց «Կրթություն» թերթում Արցախին նվիրված նպատակային էջեր կամ նրա առանձին համարներ հատկացնելու գաղափարը:

«Կրթություն» շաբաթաթերթի խմբագրի հետ ընդլայնված հանդիպում տեղի ունեցավ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճում, որտեղ ներկա էին կրթության և գիտության նախարարության, քաղաքապետարանի կրթության բաժնի, մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների տնօրեններ, փոխտնօրեններ և ուրիշներ: Հանդիպումը վերածվեց գրքի յուրատեսակ շնորհանդեսի: Գագիկ Մինասյանին ներկայացնելով որպես կրթության և լրագրության ասպարեզների երկարամյա աշխատող՝ Ա. Սարգսյանը անդրադարձավ նրա հեղինակած գրքին, որը, ինչպես վերնագիրն է հուշում, թերթի խմբագրականների ժողովածուն է, և ինչպես նշված է առաջաբանում, չնայած հրապարակախոսական էսսեների ժողովածու է, սակայն, ըստ էության, հայեցի դաստիարակության գաղափարաբանական նմուշներ են: Բազմաթիվ և բազմազան են գրքում ներկայացված թեմաները. նախակրթարանից մինչև հանրակրթական դպրոց, բարձրագույն կրթությունից՝ գիտություն, Սարդարապատ, Շուշի, մինչև հայոց մեծեր, «և յուրաքանչյուր խմբագրականում կարելի է գտնել մի հետաքրքիր միտք, դեպք, որ մեծ հաջողությամբ կարելի է ներկայացնել որպես հայեցի դաստիարակության նմուշ»,- ասաց Ա. Սարգսյանը: Նա մեջբերեց խմբագրականներից մեկում նշված հետաքրքիր մի միտք, որ բնութագրում է մեր ժողովրդի ապագան: Նկատենք, որ բոլոր խմբագրականները մտքի յուրատեսակ խտացում են և օգտակար կարող են լինել դասղեկների, կազմակերպիչների համար միջոցառումներ կազմակերպելիս: Այս հոդվածները յուրովի գնահատում, բացահայտում ու քարոզում են այն արժեքները, որոնք հազարամյակների կտրվածքով պահում են իրենց մեջ՝ դրանով իսկ հայեցի դաստիարակության խնդիր դնելով:

☞ 2

ՀԱՆԴԻՊՈՒՄ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»-Ը՝ ԱՐՑԱԽՈՒՄ

1 ☜ Հեղինակը փորձում է իր սրտի ու հոգու միջով գնահատել հավերժական արժեքները, և դրանք նոր մեկնաբանություններով ի ցույց դնել որպես համաժամանակյա արժեքներ:

Գիրքն օգտակար կարող է լինել բոլոր այն հաստատությունների համար, որոնք նախանձախնդիր են կամ խնդիր ունեն զբաղվելու հայեցի դաստիարակությամբ՝ լինի դպրոց, բուհ, թե զորամաս:

Լրագրության և կրթության ասպարեզի ազնիվ աշխատողի՝ իր վաղեմի գործընկերոջ ու բարեկամի հետ հանդիպումն Արցախյան հողում ողջունեց ԼՂՀ գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը: Նրան առանձնապես ոգևորել էր նրա գրքի բնականոն ծնունդը, և ասաց, որ այն գեղեցիկ նվեր է մեր դպրոցներին, ինչու չէ՝ բոլորիս: Գրքի բովանդակությանն անդրադառնալն առիթ դարձավ, որ գրողն իր ելույթում արտահայտվի Շարժման քառորդդարյա ճանապարհի բացթողումների և այդ առնչությամբ մտավորականի դիրքորոշման մասին՝ նշելով, որ Գագիկ Մինասյանի գրքում անուղղակիորեն այս հարցերն են շոշափվում:

«Լուսարար» թերթի խմբագիր Սվետլանա Խաչատրյանի ելույթը գլխավորապես մեր երկու հանրապետությունների կրթության համակարգի պաշտոնաթերթերի համագործակցությանն էր վերաբերում: Համագործակցություն, որի սկիզբը դրվել է ավելի քան տասը տարի առաջ՝ երկու նախարարությունների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում, սակայն սկսվելով, այդպես էլ շարունակություն չունեցավ: Մասնավորապես առաջարկվեց, որ, «Լուսարարից» բացի, արցախի ուսուցիչների համար ամբիոն ծառայի նաև «Կրթություն» թերթը, քանզի Արցախում կա կրթական հարուստ պատմություն, մանկավարժական միտք՝ արժանի հայաստանյան, ինչու չէ, նաև համահայկական դաշտ դուրս բերելու: Ի դեպ՝ այս գաղափարը հանդիպման վերջում հնչեցրեց նաև փոխնախարար Ա. Սարգսյանը՝ ասելով, որ թերթերի համագործակցությունը պետք է լինի ոչ միայն խմբագիրների, այլև ուսուցիչ-հեղինակների առումով, քանզի Արցախի անգամ մի հեռավոր գյուղում կարող է լինել ընդօրինակման արժանի մեթոդ կամ փորձ:

Թերթի խմբագիր և գրքի հեղինակ Գագիկ Մինասյանի խոսքն իր խմբագրականների նման հակիրճ էր և զգացմունքային: Նա անդրադարձավ իր արցախյան արմատներին՝ ասելով, որ չնայած ծնվել է Երևանում, բայց միշտ իր երակներում զգացել է արցախյան իր արմատներից եկող արյունը, որը նրան տվել է շնորհ, գրիչ, եռանդ ու հայրենասիրություն: «Այսօր իմ հայրենասիրությունը խաղալիքների խանութ մտած մանկան պես հագուրդ է առնում արցախյան հողում, Գանձասարից մինչև Դադիվանք, Բերձորից Շուշի, մինչև Ղազանչեցոց եկեղեցի, մինչև Ստեփանակերտի այս նորակառույց հրաշալի դպրոցը: Մեր հաղթանակները պետք է տոնենք նաև Վանա լճի ափին, քանզի այն, ինչ Աստված տվել է մեզ, չեն կարող մեզանից խլել: Կրթությունը մեզ համար նույնքան կարևոր է, որքան բանակը: Եվ համոզված եմ, որ մեր դպրոցը, եկեղեցին և բանակը՝ մեր ազգային ինքնության երեք հիմնասյուները, օրավուր հզորանալով՝ մեզ կտանեն դեպի նոր հաղթանակներ»:

Հանդիպումից հետո Գ. Մինասյանին զրույցի հրավիրեցին լրագրողները՝ «Լուսարար» թերթի խմբագիր Ս. Խաչատրյանը, Արցախի հանրային հեռուստատեսության «Մեր դպրոցը» հաղորդաշարի խմբագիր Ն. Նիկողոսյանը, Հանրային ռադիոյի գլխավոր խմբագիր Ն. Ալեքսանյանը, լրագրող Յու. Վանյանը: Ասուլիսում արծարծված հարցերը հետևյալ բովանդակության էին:

Նախ՝ Գ. Մինասյանի անցած ճանապարհը: Աշխատել է դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, Երևանի Սպանդարյան շրջանի ժողկրթբաժնում տեսուչ, հետագայում՝ բաժվար, այնուհետև «Երեկոյան Երևան» թերթում՝ լրագրող: Ի դեպ՝ այստեղ աշխատելու տարիներին նրա շնորհիվ թերթը դարձավ Արցախյան շարժման մունետիկ:

Նման գիրք ստեղծելու գաղափարը, նրա խոսքով, գալիս է հայ մամուլի ավանդույթներից, որն ունի խմբագրականների յուրատեսակ պատմություն. սկսած մեր առաջին՝ «Ազդարար» թերթից, մեր բոլոր խմբագիրներն ունեցել են խմբագրական սյունակներ, որտեղ զետեղել են իրենց համար նվիրական գաղափարներ, ձևակերպումներ և որտեղ իրենց կարծիքը, դիրքորոշումներն են արտահայտել թե՛ քաղաքական, թե՛ գեղագիտական խնդիրների վերաբերյալ: 2005 թվականից ստանձնելով «Կրթություն» թերթի խմբագրի պաշտոնը՝ ամեն համարի գրել է խմբագրականներ, որոնք օրացուցային հերթականությամբ համընկնում էին մեր որևէ հիշարժան օրվա, տոնի, ազգային արժեքի մեծարման, համաժողովրդական գնահատման իրադարձության: Նրա հավաստմամբ՝ երջանկահիշատակ Լևոն Անանյանը շատ էր հավանում իր խմբագրականները և միշտ հորդորում ունենալ առանձին գրքով: Նույնն ասում էր Սփյուռքի նախարարը՝ որ դա օգտակար կարող է լինել հատկապես սփյուռքյան դպրոցների երեխաների համար, քանի որ այդ խմբագրականները կարծես հայեցի դաստիարակության յուրատեսակ դասեր են: Դասագրքային ձևից դուրս ավելի մատչելի, ավելի գեղագիտական ձևակերպումներով երեխային կամ երիտասարդին կարող են հասցնել ինքնաճանաչողության կամ հայրենագիտական տեղեկացվածության:

Ասենք, որ Գ. Մինասյանը էլի ուրիշ գրքերի հեղինակ է: Նա հպարտությամբ ասաց, որ Հայաստանի Հանրապետության՝ Սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի մասին առաջին և առայսօր միակ գրքի հեղինակն է: «Հանրաքվե» վերնագրով այդ գիրքը փաստավավերագրական բնույթ ունի: Այնտեղ նա համախմբել է ՀՀ Սեպտեմբերի 21-ի հանրաքվեին նախորդած ժամանակաշրջանի պատմական, վավերագրական իրադարձությունները փաստաթղթային արտացոլումներով՝ մինչև հանրաքվեի իրականացում, նրա արդյունքների ամբողջական պատկերը և ՀՀ Գերագույն խորհրդի պատմական որոշումները:

Դրանից բացի նա բազմաթիվ գրքեր է հրատարակել, խմբագրել (այդ թվում՝ 7 անուն հոգևոր թեմաներով գրքեր): Նաև 3-րդ և 4-րդ դասարանների «Շախմատ» դասագրքերի խմբագրական խորհրդի ղեկավարն է: Ի դեպ՝ դեռ 90-ական թվականներին, երբ Սպանդարյանի շրջանի կրթության բաժնի վարիչն էր, «Շախմատ» առարկան մտցրել էր բոլոր հանրակրթական դպրոցները՝ ֆակուլտատիվ հիմունքներով:

Նրա կարծիքով՝ բոլոր ժամանակներում հայ ուսուցչի առաքելությունը նույնն է, և իր համար ուսուցիչը Մաշտոցից մինչև մեր ժամանակները նույնարժեք սրբություն է:

«Մենք միշտ նույնն ենք բոլոր ժամանակներում: Գիտեք, միշտ չէ, որ տվյալ ժողովուրդը կարող է լինել վերելքի մեջ: Ասում ենք, չէ, հանճարները ծնվում են հազար տարին մեկ, իսկ ինչո՞ւ ենք ուզում, որ ամեն տարի հանճար ունենանք, պիտի հաշտվենք այդ մտքի հետ: Ազգը, ժողովուրդը չի կարող ամեն տարի ստեղծել գլուխգործոցներ: Եթե Հովհաննես Մասեհյանը կարող էր Շեքսպիր թարգմանել իր ժամանակին, և մենք կարող էինք ունենալ Վահրամ Փափազյան, չի նշանակում, թե մեր այսօրվա սերիալներում նկարահանված դերասանները նույնքան հանճարեղ պետք է լինեն, որքան՝ Փափազյանը: Բայց միաժամանակ չի նշանակում, թե՝ վայ-աման, Փափազյանի ժամանակներն ավարտվել են, և մեր թատրոնը մեռել է: Չէ: Վաղը նորից Փափազյան ենք ունենալու: Ժամանակները հերթագայում են միմյանց: Իսկ մեր ժողովուրդը հանճարեղ է ոչ թե 5-րդ կամ 10-րդ դարում, այլ հանճարեղ է մեկընդմիշտ՝ ի սկզբանե մինչև վերջ»,- այսպես լավատես է նա:

ՁԼՄ-ների առնչությամբ նա ասաց, որ ժամանակակից լրագրողներից ինքը մի քիչ տարբերվում է՝ խուսափում է քննադատելուց. «Այսօր ինչքան լրատվամիջոց՝ համացանցային, թղթային և այլն, բոլորն ուզում են գտնել սենսացիաներ, բոլորն ուզում են քննադատել, որպեսզի ընթերցողներ հավաքեն: Ես դեմ եմ դրան: Եթե հարյուր լրատվամիջոցից 99-ը հայհոյում է, քննադատում, գոնե մեկը պիտի լինի՞, որ մեր հասարակության մեջ տեսնի լավը, դրականը, բարին: Այդ բարին շոյի, գուրգուրի ու փորձի վերհանել»:

Կրթական բարեփոխումների, մասնավորապես Բոլոնյան համակարգի մասին նա հետևյալն ասաց. «Ինչպես բոլոր ոլորտներում, այնպես էլ մեր կրթական դաշտում մենք փորձում ենք զարգանալ օտարի օրինակով, օտարի օրինակը տեղայնացնելով: Բայց բարեբախտաբար, այդ օտարը ժամանակին մեզանից այնքան բան է վերցրել, և մենք էլ նրանից վերցնելով՝ պարզվում է, որ վերցնում ենք այն, ինչ վաղուց ունեցել ենք: Բոլոնիայի գործընթացը սկզբնավորվել է Սորբոնի համալսարանի նախաձեռնությամբ, և նրա հիմնադիր նիստի ժամանակ ներկա է եղել նաև հայաստանյան ներկայացուցիչը: Եվ Սորբոնի պրոֆեսորներից մեկը, ով եղել է նախաձեռնող խմբի ղեկավարը, ամբիոնից ասել է՝ ես շատ ուրախ եմ, որ այստեղ՝ դահլիճում նստած է հայաստանյան ներկայացուցիչը, որովհետև այն, ինչ մենք ուզում ենք անել ամբողջ Եվրոպայում, միջնադարյան Հայաստանում արդեն անում էին հայերը»: Գ. Մինասյանը վկայակոչեց Տաթևի և Գլաձորի համալսարանները, որոնք ժամանակին ունեցել են եռաստիճան կրթական համակարգ, այսինքն՝ չորս տարի սովորելու դեպքում հինգ առարկա ուսումնասիրել են նրանք, ովքեր դարձել են վարժապետ, դրանից ավելի առարկաներ ուսումնասիրողները դառնում էին ռաբբունի կամ մնում էին տվյալ հաստատությունում, դառնում վարդապետ, այսպես ասած, դասախոս, որն էլ ժամանակակից ասպիրանտուրան էր: Նրա կարծիքով, անուններն են փոխվել, տերմինները, իսկ կրթության բովանդակությունը, ըստ էության, գրեթե նույնն է մնացել: «Այսինքն՝ այնքան բարձր ազգային արժեքներ ունենք, որ օտարից որևէ բան վերցնելու կարիք չունենք: 5-րդ դարի մեր թարգմանիչները թարգմանում էին համաշխարհային արժեքները և դրանք տեղայնացնում: Իհարկե, պետք է համամարդկային մտքի լավագույն արժեքներին տիրապետել, դրանք տեղայնացնել: Բայց դա չի նշանակում, թե պետք է պատճենել օտարին: Հաճախ մենք մեր երջանկությունը Թումանյանի «Անխելք մարդը» հերոսի նման փնտրում ենք հեռուներում, այնինչ, ոսկին մեր երկրում է, մեր տակը»:

Ի՞նչն է այսօր պակասում հայեցի դաստիարակությանը: Նրա համոզմամբ, միայն մի բան՝ ինքնաճանաչողությունը, և դրա համար էլ թերթի կարգախոսն է՝ «Ճանաչիր ինքդ քեզ». «Մենք ինքներս պետք է մեզ ճանաչենք, որ իմանանք, թե ով ենք մենք: Եթե մենք մեզ ճանաչենք, կհասկանանք, որ ախր եթե թշնամուն այդքան հեշտ էր հաղթելը, ապա ինչո՞ւ ավելի շուտ չէինք հաղթել: Ա՛յ սա է մեզ միշտ պակասում, մեր անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ մեզ միշտ խանգարել է: Մենք պետք է ինքներս մեզ ճանաչենք և հավատանք, արժանապատիվ ձևով, Աստծո կողմից մեզ տրված շնորհները կարողանանք դրսևորել, ծաղկեցնել ու դրանով մեզ դաստիարակել»:

Նրա համար Արցախն իդեալական Հայաստանի մի մանրակերտն է: Եվ եթե Հայաստանում դարերի ընթացքում կուտակվել են ինչ-ինչ թերություններ, օտար նվաճողների հետևանքն է. անգլիացի հանճարեղ բանաստեղծ Բայրոնն ասում էր, որ հայ ժողովրդի բոլոր արժանիքները Աստծո կողմից իրեն տրված են և միայն իրեն են պատկանում, իսկ բոլոր թերություններն արդյունք են նրա երկիրը նվաճած օտարների: Արցախը պետք է կարողանանք մաքրել, զուլալել և իդեալական Հայաստան դարձնել: «Մենք դա կարող ենք անել, որովհետև Արցախը համայն հայության սիրելի երկրամասն է այսօր, և հայության ամբողջ ուշադրությունը նրան է ուղղված: Մենք կարող ենք Արցախում ստեղծել ամեն ինչի իդեալական մոդելներ՝ ազգային դպրոցի, բուհի, նույնիսկ այգու, ավանդույթների, զբոսաշրջության, հյուրատան և այլն: Մենք դա Արցախում կարող ենք անել, որովհետև այլ բան է, երբ սփյուռքահայ հարուստն ուզում է օգնել Հայաստանին, որտեղ նա լսում է նաև թերությունների, անձնաշահ մարդկանց մասին և հիասթափվում, բայց ոչ մի հայ չի զլանա իր ունեցածն ուղղել Արցախին: Ու եթե մեծ ոգևորությամբ մենք հաղթեցինք ռազմի դաշտում, նույն ոգևորությամբ պիտի կարողանանք նաև խաղաղ դաշտում հաղթանակներ ապահովել: Եվ թող Արցախը լինի մայր Հայաստանի իդեալական օրինակը»,- այսպես է մտածում հայաստանյան մեր գործընկերը:

Զրույցն այնուհետև շարունակեցինք թերթերի տպագրության հետ կապված խնդիրների շուրջ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՈՍՔ ԽՈՆԱՐՀՈՒՄԻ



Նա պտղունց-պտղունց կա ամեն մի հայի մեջ, քանզի իր մարմնավորած կերպարներով և ապրած կյանքով առհասարակ կարողացել է ստեղծել Հայի բնութագրական դիմագիծը: Ցեղի յուրահատկության այսպիսի խտացումը մի անձի մեջ՝ հատուկ է միայն մեծերին, բայց նա իրեն երբեք մեծ չէր համարում: Հասարակ էր ու պարզ, ինչպես հարազատ Լոռվա մարդիկ:

Երկրային կյանքում Սոս Սարգսյանը միշտ ի՛ր տեղն ուներ ու երբեք չէր փորձում ուրիշի տեղը գրավել: Ստեղծեց թատրոն, որը ծառայեցրեց հարազատ ժողովրդին: Եվ այսուհետ ևս կրելով նրա անունը՝ Համազգային թատրոնը դարձյալ կծառայի հայ արվեստին:

1991-ին, երբ առաջադրվեց ՀՀ նախագահի թեկնածու, խնդիր ուներ նաև իրենով արժևորել այդ ինստիտուտը. չէ՞ որ երկիրը նոր էր անկախացել, ու կարիք կար խորհրդային մտածելակերպից նոր դուրս եկող հայ մարդուն հուշել ինքնության գաղափարի կարևորությունը: Հետագա տարիներին էլ ապրեց երկրի կենսական խնդիրներով, իսկական արվեստագետին վայել՝ առօրյան լրացրեց հասարակական կյանքի բարձիթողի մնացած հոգսերով, զբաղվեց դրանց լուծումներով:

Սոս Սարգսյանի էկրանավորած հերոսները բազմաթիվ են, բայց երևի նա մեր մտապատկերում միշտ կմնա որպես Նահապետ՝ իր ուրույն կեցությամբ ու բարոյախոսությամբ, արդարամտությամբ և արժանապատվությամբ:

«Համը հանում եմ արդեն. էսքան ապրելն ո՞ւմ է պետք: Հոգնել եմ, հոգնեցրել, ամեն ինչ իր ժամանակն ունի, չէ՞, մահն էլ պիտի ժամանակին գա, չի գալիս»,- տրտնջում էր առիթներով: Բայց ակնհայտորեն շտապեց հեռանալ մեզանից, որովհետև նրա մարդկային հմայքը, ցավոք, դեռ լրիվությամբ չենք հասցրել ըմբռնել:

Մեծ արվեստագետները բնավ չեն լքում ապրողներին, նրանք միշտ մնում են իրենց թողած անմահ գործերով, դրա համար էլ նրանց միշտ ծափերով են ճամփում դեպի հավերժություն:

Մեր մեծ խոնարհումը բերենք Վարպետին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԴՊՐՈՑ

ԵՐԲ ՂԵԿԸ ՀՈՒՍԱԼԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է

«Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում նույնիսկ հումանիտար առարկաներից՝ հայոց լեզվից՝ 20%, ռուսաց լեզվից՝ 58%, անգլերենից՝ 55%, հայոց պատմությունից՝ 37,2% որակական ցուցանիշները շատ ավելի բարձր են հ. 8 և 11 ավագ դպրոցների հումանիտար հոսքերի աշակերտների ցուցաբերած ցուցանիշներից: Իսկ բնագիտական առարկաների ցուցանիշներով թե՛ օլիմպիադաների և թե՛ քննությունների ժամանակ դպրոցը բարձր ցուցանիշներ է ունեցել»:

Այս տվյալները, որ ինքնին շատ բան են հուշում քաղաքի միակ թեքումով կրթօջախի մասին, մեջբերված են Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կ. Մարգարյանի զեկուցագրից, որով նա հանդես է եկել ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունում:

Այո՛, ֆիզմաթ դպրոցում (տնօրեն՝ Սուսաննա Ներսիսյան) դրվատանքի արժանի աշխատանք է տարվում մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործընթացը կատարելագործելու, դասի, ուսումնական պարապմունքների մյուս ձևերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Թեև դպրոցն այնքան էլ մեծ չէ (ունի 265 աշակերտ), բայց համապատասխան կրթությամբ չորս տասնյակից ավելի ուսուցիչ ունի, և բոլորն էլ ջանում են սովորեցնելուց զատ նաև զարգացնել սաների գեղագիտական ճաշակն ու զգացումները, նրանց մեջ դաստիարակել բնավորության ու վարվելակերպի կայուն գծեր:

- Մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի մեր աշակերտներն իրենց դրսևորեն լավ գործերով, սիրեն հայրենիքը, մարդկանց, իրենց ընկերներին, լինեն ազնիվ ու ճշմարտասեր, միշտ և ամենուր բարձր պահեն հարազատ կրթօջախի անունն ու բարի համբավը,- ասում է տնօրեն Ս. Ներսիսյանը:

Իսկ արդյունքները չեն ուշանում: 2012-2013 ուստարում դպրոցի ութ աշակերտներ մասնակցել են ՀՀ-ում անցկացված օլիմպիադայի եզրափակիչ փուլին, ընդ որում՝ Դավիթ Հարությունյանը և Սամվել Միրզախանյանը Երևանից վերադարձել են գովասանագրերով, Սերգեյ Հայրապետյանը՝ 2-րդ կարգի դիպլոմով (ֆիզիկա, ուսուցիչ՝ Աշոտ Ապրեսյան), Սերգեյ Հայրապետյանը և Արմինե Հայրապետյանը (մաթեմատիկա, ուսուցչուհիներ՝ տնօրեն Սուսաննա Ներսիսյան և Նելլի Օհանյան), Յուրի Սարգսյանը (անգլերեն, ուսուցչուհի՝ Քրիստինե Մնացականյան)՝ գովասանագրով:

Անցած ուստարում պետական, ավարտական ու միասնական քննությունները հաջողությամբ հանձնած 43 շրջանավարտներից 29-ը բուհերում զբաղեցրել են անվճար տեղեր: Ասել կուզի՝ ստացել են 18-20 միավոր: Նրանցից 15-ը այժմ ուսանում է ՀՀ առաջնակարգ բուհերում, իսկ մեկը՝ Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլ քաղաքում, ժողովուրդների բարեկամության ինստիտուտում: Այո՛, լուսավոր այս օջախում լույս կա ու ջերմություն: Ու այդ լույսը երևում է անգամ հեռվից, քանզի այն ոչ թե կայծկլտում, այլ շողում է: Բացեք մուտքի դուռը, ներս մտեք, շրջեք միջանցքներում, եղեք ցանկացած դասարանում, ճաշարանում (դպրոցը երկարօրյա է, ունի 9 խումբ, որոնցում մինչև ժամը 4.30-ը կանոնավոր դասապատրաստում է լինում) ու կհամոզվեք, որ մաքրությունը պարզապես աչք է շոյում: Սպասքի, սննդի որակի, սպասարկման կուլտուրայի մասին խոսք լինել չի կարող: Այս ամենը, հասկանալի է, ամենօրյա հետևողական աշխատանքի, ուշադրության ու հոգածության արդյունք է:

Տնօրենն, իրոք, շատ է պահանջկոտ և ջանում է, որ բոլորն էլ (ուսուցիչ, թե աշակերտ) ժամանակին ու անթերի կատարեն իրենց պարտականությունները: Ոմանք սա կարող են բծախնդրության վերագրել, բայց դա այդպես չէ:

Հստակությունը, կարգուկանոնի պահպանումը, պատասխանատվության զգացումն այստեղ նկատելի են ամեն քայլափոխի: Զգացվում է, որ ամեն մեկը գիտի իր անելիքը, իր տեղն ու դերը:

Անցկացվելիք ամեն մի միջոցառում (լինի բաց դաս, սեմինար, թե խորհրդակցություն) իր կոնկրետ ժամերը, ամիս-ամսաթիվն ունի: Սա պարզորոշ երևում է խնամքով կազմված աշխատանքային պլանից, որի ութ բաժիններից (ներդպրոցական վերահսկողության համակարգ, աշխատանք ծնողների հետ և այլն) ոչ մեկում չկա անհասցե, հենց այնպես գրված անորոշ մի տող կամ կետ: Ի դեպ, նման կոնկրետություն ու որոշակիություն ունեցող պլաններ են կազմում նաև տեղակալները, դասղեկներն ու դաստիարակները:

Նոր ուսումնականից անցել է մի քանի շաբաթ, և տնօրենության անդամներն արդեն հասցրել են դասեր լսել 4-5 առանձին դասարաններում: Որոշակի քայլեր են արել նաև դասղեկ-դաստիարակները, մեթոդմիավորման նախագահները, մյուս աշխատողները:

Տնօրենը գոհունակությամբ է խոսում անցած ուստարում ԳԹԿ-ի կողմից անցկացված արտաքին ընթացիկ գնահատումների, առարկայական տասնօրյակների, միամսյակների, տնօրենության կողմից անցկացված ստուգողական գրավոր աշխատանքների, կազմակերպված բաց դասերի արդյունքների մասին:

- Դպրոցում,- շարունակում է Ս. Ներսիսյանը,- գործում է առարկայական խորհրդի հինգ մեթոդմիավորում. մաթեմատիկա և ինֆորմատիկա, հայոց լեզու և գրականություն, օտար լեզու, բնագիտական առարկաներ, պատմություն և հասարակագիտություն: Նշածս մեթոդմիավորումները (ղեկավարներ՝ Ս. Բաղդասարյան, Ս. Գալստյան - Լ. Սարգսյան, Ի. Պետրոսյան, Ս. Պետրոսյան, Հ. Մկրտումյան) աշխատանքները կազմակերպել են պատշաճ ձևով, քաջ գիտակցելով, որ այսօր ոլորտի առջև ծառացած գերակա խնդիրն ուսման որակի բարձրացումն է:

Իսկ որակի բարձրացման միտում, իրոք, կա: Մասնավորապես, 9-րդ դասարանների բոլոր 54 աշակերտները ստացել են հիմնական կրթության ավարտական վկայականներ, ընդ որում՝ Տիգրան Ղուկասյանը՝ գերազանցության նշումով: Պետական ավարտական քննությունից (հայոց լեզու, մաթեմատիկա և այլն) 18-20 միավոր են ստացել 35 աշակերտներ: Օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներով ֆիզմաթը գրավել է առաջին տեղը՝ շահելով ինը դիպլոմ և չորս գովասանագիր: Բացի այդ, Ստեփանակերտի օրվան նվիրված շարադրությունների մրցույթում մի խումբ աշակերտներ և ուսուցիչներ պարգևատրվել են քաղաքապետ Ս. Գրիգորյանի կողմից: Իսկ «Արցախի տաղանդ» խորագրով ասմունքի փառատոնի երկրորդ եզրափակիչ փուլում, որը կազմակերպվել ու անցկացվել է դեկտեմբերի 22-ին՝ ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի հովանու ներքո, Աննա Բաբայանը (10-րդ «գ» դասարան) զբաղեցրել է 2-րդ տեղը:

Ինչպե՞ս են հասցնում դպրոցում թվարկյալ և մյուս բոլոր միջոցառումներն իրականացնել: Դրանում ոչ մի գաղտնիք չկա, կարծում է տնօրենը, ամեն ինչ հնարավոր է, եթե բոլորը լծվեն աշխատանքի, եթե ամեն մեկն ունենա իր բաժինն ընդհանուր գործում:

Այս հաջողություններում քիչ չէ երևանյան իրենց գործընկերների աջակցությունը: Դպրոցը գտնվում է ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ կրթօջախի իրավասության տակ, որն արդեն քանի՞ տարի ղեկավարում է բազմավաստակ ուսուցիչ, մեծ անուն ու ճանաչում ունեցող մանկավարժ Հայկազ Նավասարդյանը:

- Մենք շատ գոհ ենք ամենօրյա այն ուշադրությունից, որ ցուցաբերվում է մեր նկատմամբ: Նկատի ունեմ առաջին հերթին մեթոդական ձեռնարկների, դասագրքերի առաքումը, մեզ հուզող հարցերի ու խնդիրների խելացի լուծումը,- ասում է տնօրենը,- բայց անելիքներ էլ դեռ շատ ունենք, ուստի ուժ ու եռանդ չպիտի խնայենք նոր ուսումնականում ավելի գոհացուցիչ արդյունքների հասնելու համար: Եվ դա միանգամայն իրատեսական է, քանզի կոլեկտիվում շատ կան առողջ ուժեր, խելոք ու բանիմաց ուսուցիչներ, որոնց հետ կարելի է հույսեր կապել: Ֆիզմաթ դպրոցի կոլեկտիվը ձգտում է հասնել նրան, որպեսզի իրենց սիրելի դպրոցը դառնա մի այնպիսի օջախ, ուր ինչպես ակամավոր մանկավարժ Վ. Սուխոմլինսկին է բնութագրել, կթագավորի չորս պաշտամունք՝ հայրենիքի պաշտամունքը, մարդու պաշտամունքը, գրքի պաշտամունքը և մայրենի լեզվի պաշտամունքը:

Միքայել ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի
լավագույն մանկավարժ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅ

Երախտագիտության խոսքեր միշտ չէ, որ կարելի է ասել ամենքին, բայց լույսի սերմնացանին շնորհակալության խոսքեր կարելի է ասել ամեն օր: Նրանք են դաստիարակում վաղվա սերնդին՝ լուսավոր դարձնելով մեր ապագան: Իրոք, կյանքի փորձով իմաստնացած մանկավարժը միշտ ապրում է սաների հաջողություններով:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Սուսաննա Ներսիսյանին և ողջ մանկավարժական կոլեկտիվին: Ուզում եմ նաև իմ գոհունակությունը հայտնել 12-րդ «բ» դասարանի դասղեկ Իրա Պետրոսյանին և 8-րդ դասարանի դասղեկ Էլզա Գրիգորյանին՝ իրենց ուշադիր վերաբերմունքի և ջերմ հոգատարության համար:

Երեխաները սովորում են մի դպրոցում, որի նշանաբանն է՝ «Մեր դպրոցը մեր տունն է»:

Սիրելի ուսուցիչներ, շարունակեք ապրել բարեգործ ու ստեղծագործ կյանքով, շարունակեք սերունդներին փոխանցել ոչ միայն ձեր մասնագիտական հմտությունները, այլև ձեր արժեքավոր հատկանիշները:

Օգտվելով առիթից՝ շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական առաջիկա տոնի առթիվ, մաղթում հաջողություններ թե՛ անձնական կյանքում և թե՛ աշխատանքում:

Շնորհավոր ձեր տոնը, սիրելի՛ ուսուցիչներ, թող ձեր օրն սկսվի և ավարտվի ծիծաղով, քանզի ձեր ծիծաղից և սրտի բարուց են ծնվում բյուր հայրենասեր սաներ: Թող ձեր ճամփին ծիածանվեն խինդ ու սեր...

Վիկտորյա ՊԵՏՐՈՍՅԱՆ
(ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ)
20-րդ դարի Արցախի
լավագույն մանկավարժ
ֆիզմաթ դպրոցի սաներ
Սամվել եւ Վիկտորյա
Միրզախանյանների տպատիկ
գ. Հաթերք

ԽՆԴԻՐ

ԿԱ՞ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻ

Ուսումնական տարին մոտենում էր ավարտին: Հանրագումարի էի բերում տարվա ձեռքբերումները, ինչու չէ, նաև բացթողումները, երբ դասարանի դուռը կամացուկ բացվեց, ու ներս մտան մի խումբ ծնողներ: Նայելով նրանց դեմքերին՝ ես հասկացա, որ ինչ-որ բան նրանց մտահոգում էր, և ինձնից ակնկալում են դրական պատասխան: Այս անգամ իմ հյուրերը նրանք են, ում երեխաները սովորում են հարևան գյուղերի միջնակարգ դպրոցներում: Ուստի չզարմացա, երբ հարմար տեղավորվելուց հետո նրանք հետևալ հարցն ուղղեցին ինձ.

- Դուք միջնակարգ կրթություն ո՞ր գյուղի դպրոցում եք ստացել:

Ոչ միայն ես, ինձնից առաջ էլ գյուղի դպրոցի շրջանավարտներն ուսումը շարունակել են Աշանի կամ Բերդաշենի միջնակարգ դպրոցներում, իսկ վերջին տարիներին՝ նաև Սպիտակաշենի միջնակարգում: Համարյա նույն վիճակում են բոլոր փոքր գյուղերի շրջանավարտները: Ճիշտ է, 80-ական թվականների վերջերին միջնակարգ դպրոցների թիվն զգալիորեն ավելացավ, բայց, իհարկե, հնարավոր չէ, որ բոլոր գյուղերում լինի միջնակարգ դպրոց:

Ես մի պահ մտովի հետ դարձա 50-60-ական թվականները: Այդ տարիներին միջնակարգ դպրոցների թիվն անհամեմատ քիչ էր: Հետևաբար, միևնույն միջնակարգում կարող էին սովորել շատ բնակավայրերից եկածներ, և հնարավոր է՝ նրանց թիվը հասնում էր մի քանի տասնյակի: Հին Աշանի դպրոցում միաժամանակ սովորում էին Եմիշճանի, Սպիտակաշենի, Նորշենի, Հացու, Ավդուռի և Մյուրիշենի դպրոցների շրջանավարտները: Դպրոցն ուներ հանրակացարան (ինտերնատ)՝ իր սպասարկող անձնակազմով: Աշակերտներն ստիպված չէին լինում ամեն օր կիլոմետրերով քայլել միջգյուղային ցեխոտ ճանապարհներով: Էլ չեմ ասում, որ ձմռան կարճ օրերին ժամը 9-ին դասի հասնելու համար տնից պետք է դուրս գալ ժամը 6-ին, 6.30-ին:

- Ստացվում է, որ ինչպես մեր երեխաները, հետագայում նաև նրանց երեխաները նույն ճակատագրին պետք է արժանանան: Մենք գիտենք,- իրենց խոսքը շարունակեցին զրուցակիցներս,- որ կրթության վրա պետության ուշադրությունը շատ մեծ է, և մեր բյուջեի մի զգալի մասը ծախսվում է այդ ուղղությամբ, բայց չէ՞ որ հանրապետության քաղաքացիներիս նկատմամբ պետական հոգածությունը պետք է որ նույնը լինի: Մենք ինչո՞վ ենք մեղավոր, որ փոքր գյուղում ենք ծնվել: Սկզբից մինչև վերջ մասնակցել ենք Արցախյան ազատամարտին, ենթարկվում ենք պետական բոլոր օրենքներին, պետական հարկերը մուծում ենք ժամանակին (հողահարկեր, վարկեր), բայց չենք օգտվում նույն հնարավորություններից: Մեր նախադպրոցական տարիքի երեխաները մանկապարտեզի երես չեն տեսել ու չեն էլ տեսնի: Մեր նյութական միջոցները, բնականաբար, չեն հերիքում: Ինքներդ պատկերացրեք. միայն Սպիտակաշենի միջնակարգը գնալ-գալու համար տարվա ընթացքում 2-3 զույգ կոշիկը չի հերիքում: Մի պահ նույնիսկ փորձեցինք մեր երեխաներին ուսման տալ Մարտունու արհեստագործական ուսումնարան, բայց էլի ստացվում է, որ մինչև Սպիտակաշենի դպրոցը պետք է դարձյալ ոտքով գնան, որովհետև սպասարկող ավտոբուսի երթուղին մինչև այդտեղ է: Ուսումնարանն էլ հանրակացարան չունի, էլ չենք ասում ավտոբուսով երեխաների տեղափոխման վտանգի գործոնի մասին: Այս բոլորն ազդում է գյուղի երիտասարդության արտահոսքին. երբ պայմանները բավարար չեն, երիտասարդները չեն ամրանա գյուղում:

Ա՛յ, եթե ենթաշրջանի դպրոցներից մեկում լիներ հանրակացարան՝ սպասարկող անձնակազմով, հնարավոր կլիներ շրջակա գյուղերի շրջանավարտներին այդտեղ ուղղորդել: Համոզված եղեք, որոշ մարդկային արժեքներ էլ կձևավորվեն ու կզարգանան՝ ընկերասիրություն, վարվելակերպ, համատեղ ապրելու կուլտուրա (որն անհրաժեշտ է նաև բանակում), միմյանց նկատմամբ վստահություն և այլն: Չի լինի՞, որ նյութապես օգնեն նման ընտանիքներին:

Ես հայտնվել էի, քիչ է ասել, անհարմար վիճակի մեջ, որովհետև նրանց հարցերին լուծում տալու ուղի չէի տեսնում: Միակ բանը, որով փորձեցի սփոփել նրանց, այն էր, որ իրենց մտահոգությունները (որը միայն իրենցը չէ) կփորձեմ թերթի միջոցով ծանոթացնել համակարգի աշխատողներին: Գուցե թե լուծման ավելի արդիական ուղիներ մատնանշեն: Չմոռացա նաև շեշտել, որ պետությունը միջոցներ չի խնայում բոլոր բնակավայրերում դպրոցներ բացելու համար, ուժեղ թափով առաջ է տանում դպրոցաշինության, դպրոցների կահավորման, տեղեկատվական ժամանակակից տեխնիկայով ապահովելու գործը: Գուցե կգա ժամանակ, որ այդ հարցերն էլ լուծում կստանան:

Ինձ համար պարզ դարձավ, որ կրթության ամենօրյա խնդիրներին անդրադառնալիս ակնհայտ է դառնում կրթության կառավարման գործում հասարակության ներգրավման անհրաժեշտությունը: Այսօր այդ պահանջը հնչում է պետական մակարդակով: Ազգային առաջնային խնդիրներից մեկը կրթության կառավարմանը հասարակության մասնակցության ընդլայնումը և կրթությունը հանրության համար բաց համակարգ դարձնելն է: Հանրակրթական դպրոցը՝ որպես սոցիալական պատվեր կատարող, պետք է որ լսի հասարակության ձայնը, իմանա նրա կարծիքը կրթության բնագավառի արդիականացման մասին. չէ՞ որ հասարակության լայն զանգվածները հենց աշակերտների ծնողներն են:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճան

ՎԱՍՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ

ԹՇՆԱՄՈՒ ՍԱՌԸ ՇՆՉԻՑ ԷԼ ՉԻ ԹՈՇՆԻ ԴԱՇՏԻԴ ՇԱՂԻԿԸ

Ընդհանրապես, սխալ կլիներ կարծել, թե Արցախյան շարժումը հասունացել է միայն վերջին տասնամյակների ընթացքում: Այսպես մենք կժխտեինք ազատագրական պայքարը՝ սկսած վաղ ժամանակներից, որոնք արտացոլվել են զինված պայքարով, պայմանագրային համաձայնություններով: Հիշենք, որ մենք հարցերը լուծել ենք մեծ մասամբ ոչ պայմանագրային համաձայնությամբ: Ունենալով օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ՝ 1980-ական թվականների վերջին մեր Շարժումը հասավ իր գագաթնակետին: Այստեղ առանձին զգուշությամբ պետք է մոտենանք վերակառուցման բաղկացուցիչ մաս կազմող հրապարակայնությանն ու դեմոկրատացմանը, որն էլ հիմնաքար էր ազգային զարթոնքի համար:

Արցախահայությունը 1920-ական թվականներին ծխացող հարցը նորից բարձրացրեց, քանի որ Ադրբեջանը ԼՂ-ի մարզում բացահայտ հակահայկական քաղաքականություն էր վարում: Նրանց նպատակն էր ԼՂ-ն հայաթափ անել՝ ինչպես դա արվեց Նախիջևանի դեպքում: Եթե շարունակվեր, սպիտակ եղեռնն անպայման կկրկնվեր և Արցախում: Ադրբեջանն օգտագործում էր բոլոր միջոցները նպատակին հասնելու համար, կյանքի տարրական պայմանների բացակայությունն արագացնում էր արտագաղթը հայրենիքից, ոտնահարվում էին հայ բնակչության մարդկային իրավունքները, ազգային արժանապատվությունը: Ավելի խորանալով՝ հանգում ենք նրան, որ Ադրբեջանը ցանկանում էր վերացնել հայի ազգային առանձնահատկությունները՝ լեզուն, սովորույթներն ու ավանդույթները:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը ԽՍՀՄ սահմանադրության համապատասխան որոշում ընդունեց՝ դիմել Ադրբեջանական ԽՍՀ-ին, Հայկական ԽՍՀ-ին և ԽՍՀՄ ԳԽ-ին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմը մտցնելու մասին: Մեր շարժման մեջ ոչ մի ծայրահեղականություն չկար: Շարժմանը մասնակցում էին ոչ թե առանձին մարդկային խմբեր, այլ դա համաժողովրդական ազգային-ազատագրական շարժում էր, որի ղեկավարները գիտության և մշակույթի նշանավոր անձինք էին ու պետական գործիչներ, չէր գործադրվում սահմանադրական խախտում: Այնուամենայնիվ, ԽՍՀՄ-ը այն որակեց որպես ծայրահեղական:

Արցախյան պայքարը քաղաքական բնույթ ուներ, որովհետև մենք պայքարում էինք իշխանափոխության և ազգային ինքնորոշման համար: Խորհրդային Միությունը բացասական վերաբերմունք ուներ, պարզ է, և ամեն ջանք գործադրում էր հարցը լուծել տնտեսական ճանապարհով, որն, անշուշտ, մեզ կտաներ դեպի պարտություն: Խորհրդային միության կառավարությունը Ադրբեջանին տրամադրեց 400 միլիոն ռուբլի՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գյուղերը բարեկարգելու նպատակով: Սակայն այս վճռորոշ ժամանակաշրջանում Ադրբեջանը շարունակեց իր սկսած քաղաքականությունը և բարենորոգումներ կատարեց ԼՂԻՄ-ի միայն ադրբեջանաբնակ գյուղերում: Բայց արդյո՞ք մենք կբավարարվեինք, եթե հայաբնակ գյուղերում բարենորոգումներ կատարվեին: Իհարկե՝ ո՛չ: Այդ խաբկանքը մեզ համար չէր: Ադրբեջանը մեր շարժումը կասեցնելու համար նույնիսկ դիմեց ծայրահեղ միջոցների. հայ բնակչության ջարդեր կազմակերպեց Սումգայիթում, Բաքվում, այնուհետև՝ բռնագաղթ: Սակայն դա ոչ թե ջլատեց մեր ուժերը, ոչ թե հուսահատվեցինք, այլ ավելի համախմբվեցինք՝ մեր արդար պահանջն ի կատար ածելու:

Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը ծանր կացության մեջ դրեց Հայաստանին: Բնական աղետի վնասները վերականգնվում էին, բայց մեծ դժվարությամբ, որի հիմնական պատճառներից մեկն Ադրբեջանի կողմից շրջափակումն էր: Գլխավորն այն է, որ մենք կարողացանք շրջանցել բոլոր դժվարությունները՝ կապված նաև ադրբեջանցիների կողմից հայ բնակչության բռնագաղթի հետ, որն ընթանում էր կոտորածով, թալանով, հրդեհումներով, անմարդկային վերաբերմունքով: Առանց այն էլ շիկացած իրադրության վրա յուղ լցնել էր 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ միավորիչ համագումարին Հայաստանի չմասնակցելը: Կենտկոմը ձեռնարկեց պատասխան քայլեր, և 1991թ. ապրիլի 30-ից խորհրդային զորքերն Ադրբեջանի միլիցիայի հատուկ ջոկատների մասնակցությամբ հարձակում ձեռնարկեցին Հայաստանի սահմանամերձ և Արցախի ենթաշրջանների հայկական բնակավայրերի վրա: Լայն հարձակումով հայաթափ արվեցին երկու տասնյակից ավելի հայկական գյուղեր, տասնյակ մարդիկ պատանդ տրվեցին Ադրբեջանին:

Չնայած Արցախում դրությունն օրհասական էր, բայց անկախության գաղափարը զարթոնք ապրեց Հայաստանում, և 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն: Պատերազմական գործողությունների ընթացքը բավականին թեժ էր, բայց 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդները, հաշվի առնելով արցախահայության կամքը, ընդունեցին «Հռչակագիր ԼՂՀ հռչակման մասին», իսկ դեկտեմբերի 10-ին քվեարկեցին անկախության օգտին:

1992թ. սկսվեց ռազմական հաջողությունների ժամանակաշրջանը: 1992թ. մայիսի 9-ի ռազմական օպերացիան՝ Շուշին ազատագրելու նպատակով, հաղթական ավարտ ունեցավ: Մեկը մյուսի հետևից ազատագրեցինք Լաչինը, որը պակաս կարևոր չէր, ազատագրվեց Մարտակերտի ու Շահումյանի մեծ մասը, ոչնչացվեցին գլխավոր ռազմակետերն Աղդամում, Զանգելանում, Կուբաթլուում, Քելբաջարում: Այստեղ առանց օգնության հնարավոր չէր: Աշխարհի որ ծայրից ասես որ մեր սփռված հայերը չեն արձագանքել՝ մեր պատմության վերջին էջը չշրջելու համար: Ճիշտ է, մեզ հաջողվեց հաղթել անհավասար կռվում, բայց ունեցանք բազում զոհեր ու վիրավորներ: Հայրենասիրության միևնույն աղբյուրից սնված հայ քաջարի մարտիկներն ազատագրեցին Արցախը. ո՞ր մեկին հիշենք, նրանցից ամեն մեկը մի լեգենդ է, առասպել, արիության մարմնացում ու հայ զինվորի իսկական տիպար:

Ողջ հայության մասնակցությամբ մենք այսօր ունենք ազատ ու անկախ Արցախ, որը վայելում է Գոյամարտի արդյունքները: Դրանք հիմք են տալիս ևս մեկ անգամ ասելու, որ մենք ենք մեր երկրի տերը: Ունենք պետական խորհրդանիշներ՝ դրոշ, զինանշան, օրհներգ, սահմանադրություն: Պետական լեզուն մեր հանրապետությունում հայերենն է: Ունենք պետական կառավարման մարմիններ և հուսալի հենարան՝ ի դեմս Արցախի պաշտպանության բանակի: Հայրենիք իմ, որդիներդ պատրաստ են քո հաղթական արդյունքների շարքը համալրել նորանոր հաջողություններով, միայն թե թշնամու սառը շնչից չքոշնի դաշտիդ ծաղիկը, և մենք միշտ հայ զգանք պապերից ավանդ ստացած մեր հայրենիքում:

Գայանե ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Քերթի Կ. Հակոբյանի անվան միջն. դպրոցի ուսուցչուհի

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՎԻՐՅԱԼ ԶԱՎԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սեպտեմբերի 13-ին Նորագյուղի միջնակարգ դպրոցում կազմակերպվեց հուշ-ցերեկույթ՝ նվիրված զոհված ազատամարտիկ Վիտալի Պետրոսյանի ծննդյան 52-րդ տարեդարձին: Վիտալի Պետրոսյանն Արցախյան գոյամարտի նվիրյալներից է, ով փափագում էր հարազատ բնօրրանը տեսնել ազատ ու անկախ: Նա իր հայրենասիրական զգացմունքներն արտահայտում էր կտավի միջոցով, որոնցում պատկերում էր Մասիս սարը՝ հայերիս համար դեռևս անհաս բաղձանքը, հարազատ գյուղի հրաշալի բնությունը:

Հուշ-ցերեկույթին ներկա էին Վ. Պետրոսյանի հարազատները, դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները, մարտական ընկերներ, զինվորականներ: Դպրոցի կազմակերպիչ Լիդա Հայրիյանը բացեց միջոցառումը, որից հետո հնչեց Արցախի օրհներգը: Ներկաները ծաղիկներ տեղադրեցին Արցախյան ազատամարտում զոհված նորագյուղցիների հիշատակը հավերժացնող վահանակին: Ապա Վիտալի Պետրոսյանի, ում անունն այսօր կրում է Նորագյուղի միջնակարգ դպրոցը, կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ դպրոցի զինղեկ Արթուր Հայրապետյանը:

- Սովորելով Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում՝ Վիտալին ուսմանը զուգահեռ հաճախում էր նաև գեղանկարչության դասընթացների: Ավարտելով ինստիտուտը՝ ստացել է ինժեներ-էներգետիկի մասնագիտություն: Վերադառնալով հայրենի գյուղ՝ աշխատել է կոլտնտեսությունում: Ազատ ժամերին զբաղվում էր նկարչությամբ: Նկարել է Կարկառի հովիտը պատկերող կտավ՝ իր մարդաշատ գյուղերով, բնության բազում տեսարաններով: Երբ Հայաստանի ժողովրդական նկարիչ Հրաչյա Ռուխկյանը տեսել է նկարը, շատ է զարմացել. «Բազմափորձ նկարիչը ռիսկ չի անի այսպիսի մեծ գործ սկսել: Այս ուսանող տղան ինչպե՞ս է այսպիսի մեծ կտավ սկսել ու կարողացել տակից դուրս գալ: Այդպես համարձակ կարող է լինել միայն դարաբաղցին»:

Վիտալի Պետրոսյանի ստեղծած այդ հոյակերտ կտավի շարունակությունը եղավ նրա մաքառումներով լի կյանքը: Հարևան Խոջալուն հանգիստ չէր տալիս նորագյուղցիներին: Վիտալին եղբայրների հետ ինքնաշեն հրանոթ պատրաստեց, որի առաջին զարկը թշնամու մոտ խուճապ առաջացրեց: Երկար ու բովանդակալից էր Վիտալի Պետրոսյանի մարտական ուղին: Նա միշտ կռվողների առաջին շարքում էր: Նույնիսկ հիվանդությունը նրան հետ չպահեց մարտական գործողություններին մասնակցելուց:

1994 թվականի ապրիլի 13-ին թեժ մարտում ընկավ հայրենիքի քաջ զինվորը: Մարտական գործողություններին ակտիվ մասնակցելու և ցուցաբերած խիզախության համար 1995 թվականին ԼՂՀ նախագահի հրամանագրով Վիտալի Պետրոսյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով: Փա՜ռք ու պատիվ Արցախյան ազատամարտի բոլոր մասնակիցներին և հավերժ փա՛ռք բոլոր նահատակներին:

Այնուհետև ելույթի համար խոսքը տրվեց շեֆ զորամասի՝ տանկային բրիգադի կապիտան Սարգսյանին.

- Այսօր հայոց երկնակամարում թևածում է հարաբերական խաղաղությունը: Արցախյան ազատամարտում մենք հաղթեցինք ոգու ուժի շնորհիվ: Ես հպարտ եմ, որ ներկայիս սերունդը չի մոռանում անցյալը, ի դեմս Վիտալի Պետրոսյանի՝ իր հարգանքի տուրքն է մատուցում մարտիրոսված բոլոր մարտիկների հիշատակին: Վստահ եմ, որ միասին ենք պաշտպանելու ու պահպանելու Արցախ աշխարհի անկախությունը:

Ներկաների հետ իր հուշերը կիսեց Վիտալի Պետրոսյանի մարտական ընկեր, Արցախյան շարժման ակտիվիստ Սլավիկ Առուշանյանը:

- Վիտալի Պետրոսյանն ինձ համար շատ թանկ մարդ է եղել, ու այժմ ինչքան էլ փորձեմ պատմել նրա մասին, միևնույն է, նրա կերպարն ամբողջական չեմ կարող ներկայացնել: Նա իսկական հայրենասեր էր: Մեր վերջին հանդիպման ժամանակ նկատեցի, որ Վիտալիի առողջական վիճակը լավ չէ: Հորդորեցի, որ զբաղվի իր առողջությամբ, բայց հրաժարվեց: Շրջանի ղեկավարը Վիտալիին աշխատակազմում գործ էր առաջարկել, ասացի՝ ինչո՞ւ չես համաձայնվում, միանգամից առողջությանդ հարցն էլ կկարգավորես: Նա, սակայն, պատասխանեց. «Մինչև Արցախում խաղաղություն չտիրի, ես զենքս վայր չեմ դնի»: Իր ապրած կարճ, բայց բովանդակալից կյանքով Վիտալին ապացուցեց, որ հայրենիքի նվիրյալ զավակ է:

Նորագյուղի ազատամարտիկների միության մասնաճյուղի ղեկավար Վիտալի Պետրոսյանի եղբայր Վլադիմիր Պետրոսյանը շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենությանը, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվներին՝ դպրոցում պարբերաբար նման միջոցառումներ կազմակերպելու համար: «Հիրավի, մեծ է դրանց դերն ու նշանակությունը ապրողներիս հիշողությունը մշտարթուն պահելու համար: Եղբայրս ուսման գերազանցիկ էր, խաղաղ պայմաններում իրեն դրսևորեց իբրև մարդկային վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, իսկ ահա ռազմի դաշտում աչքի ընկավ քաջությամբ ու հատկապես՝ հայրենասիրությամբ»:

Դպրոցի աշակերտները հանդես եկան Վիտալի Պետրոսյանին ձոնված բանաստեղծություններով, հայրենասիրական երգերի կատարումներով:

Նախօրյակին՝ Վիտալի Պետրոսյանի ծննդյան 52-րդ տարեդարձին նվիրված, նույնպես ավանդական դարձած, ֆուտբոլի հուշամրցաշար էր կազմակերպվել: Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը միջոցառման ժամանակ պարգևատրվեցին դպրոցի տնօրենի պատվոգրով:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Ստեղծագործական որոնումներ

Դպրոցը ոչ միայն կրթում է իր սաներին, նրանց ուսուցանում գիտութան հիմունքները, այլև դաստիարակում է նրանց, հսկայական դեր է կատարում մարդու՝ մեր վաղվա քաղաքացու ձևավորման գործում: Իսկ չի կարելի կրթված ու բազմակողմանի զարգացած մարդուն պատկերացնել առանց լեզվի բարձր կուլտուրայի, առանց կիրթ խոսքի: Մայրենի գրական լեզվով կիրթ խոսելն ու գրելը մարդու ընդհանուր զար-գացածության և վարքագծի էական հատկություններից մեկն է:

Դպրոցի ներկա փուլում, երբ պահանջվում է ուսուցումն ամեն կերպ կապել կյանքի հետ, հրամայական է դառնում աշակերտների խոսքի զարգացման ու հարստացման հարցը: Իսկ խոսքի զարգացումը մեկ-երկու տարում չի ավարտվում. մարդն իր ողջ կյանքում սովորում և հարստացնում է իր խոսքը նոր բառերով, դարձվածքներով ու քերականական-ոճական ձևերով: Յուրաքանչյուր աշակերտ, անկախ այն բանից, թե վաղն ինչ մասնագիտություն է ընտրելու, պարտավոր է դպրոցում խորությամբ, կատարելապես տիրապետել մայրենի լեզվին, յուրացնել նրա բոլոր հարստությունները, ընկալել նրա ամբողջ գեղեցկությունն ու հմայքը, սովորել հստակ, պատկերավոր խոսել և շարադրել իր մտքերը: Այդ խնդրին առավել մեծ ուշադրություն են դարձնում հայոց լեզվի և գրականության ուսուցիչները:

Գրականության յուրաքանչյուր դաս ստեղծագործական մտքի թռիչք է, երևակայության պայծառացում, հաղորդակցում՝ բարոյականի, գեղեցիկի, վեհի հետ: Եվ գրականության յուրաքանչյուր դաս պետք է ծառայի ոչ միայն աշակերտներին գրողների կյանքի, ստեղծագործությունների մասին հարուստ տեղեկություններ հաղորդելուն, այն նաև պետք է նպաստի աշակերտների գեղեցիկ խոսքի զարգացմանը: Մայրենի լեզվի յուրաքանչյուր դաս պիտի ունենա խոսքի զարգացման բաժին՝ անկախ դասի տեսակից, անցնելիք նյութից: Լեզվական բոլոր թեմաները ևս պիտի ծառայեն աշակերտների խոսքի զարգացմանը: Իսկ բանավոր և գրավոր խոսքի զարգացման միջոցները բազմազան են: Ծրագրային յուրաքանչյուր նյութին համապատասխան ուսուցիչը պիտի կատարի խոսքի զարգացմանը նպատակաուղղված տարբեր աշխատանքներ:

Այսպես, Ստեփան Զորյանի «Պապն ու թոռը» պատմվածքը 6-րդ դասարանում ուսուցանելիս բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար հանձնարարում եմ այսպիսի առաջադրանքներ:

Առաջադրանք առաջին: Տեքստից նախապես առանձնացնում եմ մի նախադասություն, գրում գրատախտակին և պահանջում սովորողներից՝ տվյալ նախադասությանը համապատասխան խոսք ստեղծել:

Դիցուք սա. «Առվի քչքչոցի հետ Եփրեմ պապի ականջին էր հասնում և՛ թռչունների երգը, և՛ խոտերի շրշյունը, և՛ հովից օրորվող թփերի շշունջը, իսկ հեռվից գալիս էր դարձյալ եկեղեցու զանգերի ձայնը ու խառնվում անտառի խշշոցին»:

Օգնության կարգով տալիս եմ թեմատիկ բառախումբ *(գետ, խշշոց, լռություն, ձոր, անտառ, այուք, ըմբոշխնել):* Անմիջապես գործի են դրվում երեխաների երևակայությունը, պատկերավոր, դիպուկ բնորոշումները, պատմում են հորինելով, ստեղծագործելով:

Առաջադրանք երկրորդ: Իմ օգնությամբ նույն տեքստից առանձնացնում են գեղեցիկ ու դիպուկ արտահայտություններ.

«1. Ահա նրա ականջին էր հասնում հինավուրց անտառի խշշոցը, որ նման էր գետի տևական շառաչի: 2. Անտառը խշշում էր այնպես, կարծես բոլոր ծառերը միասին երգ էին ասում»:

Իմ պահանջով աշակերտները, տեքստին հարազատ մնալով, հորինում են կապակցված խոսք: Բացատրում եմ, որ նման գեղեցիկ ոճն ու դիպուկ արտահայտությունները խոսքին հաղորդում են գունեղություն, հյութեղություն ու պատկերավորություն: Սովորողների բառապաշարը հարստացնելու նպատակով ավելացնում եմ այդ շարքը. *թռչունների զվարթ ճռվողյուն, հովասուն ծառեր, ոսկեշող աշուն, հասուն հատապտուղներ, զմրուխտյա գետակ, տերևների սոսափ:* Ապա պահանջում եմ տրված բառակապակցություններն օգտագործել կապակցված խոսքում: Դասարանի ակտիվ մասնակցությամբ ծայր է առնում բանավոր խոսքը, կազմում են նախադասություններ, կապ ստեղծում դրանց միջև, ապա շարադրում գրավոր:

Բանավոր և գրավոր գեղեցիկ խոսք ստեղծելուն մեծապես նպաստում է տարբեր բովանդակությամբ նկարների ցուցադրումը: Տեղին է հիշել ռուս անվանի մանկավարժ Կ. Ուշինսկու ասածը. «Բավական է նկարը տանել դասարան, և համրերն էլ կխոսեն»:

Առաջադրանք առաջին: Գրատախտակին փակցնում եմ գարունը պատկերող մի նկար, պահանջում ստեղծել կապակցված խոսք ու վերնագրել: Օգնության կարգով գրատախտակին գրում եմ առաջին նախադասությունը: Այնուհետև համառոտ գրում եմ երկրորդ նախադասությունը և պահանջում դարձնել ծավալուն: Իհարկե, այստեղ աշակերտները գործի են դնում լեզվական կարողությունները ևս:

Նման աշխատանք հաճախ եմ կատարում համակարգչային կաբինետում: Աշակերտներից յուրաքանչյուրը Paint գրաֆիկական խմբագրիչում ստեղծում է բնության պատկերներ:

Առաջադրանք երկրորդ: Փակցնում եմ մի նկար, պահանջում այն վերնագրել և կազմել կապակցված խոսք, որի համար տալիս եմ թեմատիկ բառախումբ *(երկիր դրախտավայր, նախշազարդ խաչքարեր, զմրուխտյա լեռներ, ազատաբաղձ հոգի, աշխատասեր ժողովուրդ, պաղպաջուն աղբյուրներ):* Դասարանի ակտիվ մասնակցությամբ յուրաքանչյուր նախադասություն խմբագրվում է իմ կողմից, և ստացվում է մի տեքստ, որն էլ վերնագրում են աշակերտները: Իհարկե, ընթացքում ուղղություն եմ տալիս նրանց մտքերին և հետևում, որ բանավոր ճիշտ արտահայտվեն, ուշադիր լինեն նախադասության կառուցվածքին, խոսքի գեղեցկությանը:

Բանավոր խոսքի զարգացմանը նպաստող գործոններից է նաև ճանաչողական խնդիրների կամ առաջադրանքների արդյունավետ կիրառումը: Այս դեպքում ողջ ծանրությունն ինձ վրա եմ վերցնում՝ մշակելով դասանյութի բովանդակությանը համապատասխան այնպիսի խնդիրներ ու առաջադրանքներ, որոնք աշակերտներին կմղեն որոնողական-ստեղծագործական աշխատանքի: Այսպես, 5-րդ դասարանում Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունն ուսումնասիրելիս, նյութի բովանդակությունից ու նպատակից ելնելով, աշակերտներին եմ հասցնում քնարական հերոսի հոգեկան ապրումները, որպեսզի երեխաները հուզվեն և ապրեն դրանցով, դաստիարակվեն հեղինակի պատգամներով, դրսևորեն իրենց անհատական վերաբերմունքը: Այս առաջադրանքները տալիս եմ թեմայի ուսուցման ողջ ընթացքում: Այսպես. *1. Ի՞նչն է ձեզ համար ավելի տպավորիչ այս բանաստեղծության մեջ: 2. Ինչպե՞ս եք հասկանում հեղինակի տված պատգամը: 3. Ի՞նչ է նշանակում՝ մեր ալեհեր հայոց լեզուն:*

Համապատասխան մեկնաբանություններից հետո ամբողջացնում եմ խոսքս: Սովորողների մեջ գիտակցական վերաբերմունք, սեր ու հետաքրքրություն առաջացնելու նպատակով իմ խոսքը համեմում եմ լեզվի մասին մեծերի ասույթներով, ընթերցում եմ նաև հատվածներ մայրենիին նվիրված տարբեր բանաստեղծություններից:

Այնուհետև հանձնարարում եմ շարադրություն: Առաջադրում եմ հետևյալ վերնագրերը. «Մեր մայրենի լեզուն», «Անաղարտ պահիր քո մայրենին», «Մեսրոպատառ հայոց լեզուն»: Օգնության կարգով տալիս եմ թեմատիկ բառեր և բառակապակցություններ:

Նման ձևով կարելի է մատուցել հաջորդ՝ Նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծությունը:

Աշակերտների պատկերավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են գեղարվեստական գրականության ընտիր հատվածների մեկնաբանումն ու վերարտադրումը: Այո, գրական նյութերի վրա պետք է զարգացնել սովորողների պատկերավոր մտածողությունն ու խոսքը:

Գեղեցիկ խոսք ունենալու համար աշակերտները պետք է ունենան նաև հարուստ բառապաշար: Աշակերտի բառապաշարի հարստացման խնդրում պետք է հետևողական լինել և պահանջկոտ, աշխատել որոշակի սկզբունքով՝ միշտ հնի վրա նորն ավելացնելով: Եվ երբ խոսում ենք աշակերտի բառապաշարի հարստացման մասին, նկատի ունենք նրա գործուն բառապաշարը, օգտագործած բառերը: Սա նշանակում է, որ մենք չպետք է բավարարվենք միայն անծանոթ բառերի բացատրությամբ, պետք է այդ բառերը գործածել տանք, դարձնենք աշակերտի սեփականությունը:

Աշակերտի բառապաշարի հարստացման կարևոր միջոցներից մեկը գեղարվեստական ստեղծագործության մեջ հանդիպող անծանոթ բառերի բացատրությունն է, նրանցով աշակերտի խոսքը հարստացնելը: Պետք է հասնել այն բանին, որ աշակերտներն իրենք կարդացած գրքերում պատահած բառերը բառարաններով սովորեն, հույսները չդնեն միայն ուսուցչի վրա:

Բառը հիշելուն օգնում է դրանց գործածությունը նախադասություններում, շարադրություններում, մի խոսքով՝ իրենց խոսքում:

Գրականության դասերին գրական-գեղարվեստական բնագրերի, բանաստեղծությունների ուսումնասիրումը կարելի է դիտել իբրև յուրահատուկ համագործակցություն: Համագործակցություն ոչ միայն մեր և աշակերտի միջև, այլև անուղղակի ձևով՝ ուսուցման աշխատանքներին մասնակցում է նաև գրական երկի հեղինակը: Դասի ընթացքում աշակերտներին մղում եմ աշխատել, որոնել, գտնել, համաձայնել կամ չհամաձայնել հեղինակի հետ, հիանալ կամ քննադատել նրան բառերի, պատկերավոր արտահայտությունների օգտագործման առումով:

☞ 7

Շնորհավորանք

ՎԵՄԻ ՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆ, ԲԱՐՈՒ ՍԵՐՄՆԱՑԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Երջանիկ է այն սերունդը, ում բախտ է վիճակվել աշակերտել Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անահիտ Պողոսյանին: Նրա համար չկա ավելի կարևոր ու պատասխանատու առաքելություն, քան սերունդներ կրթելն ու դրա միջոցով հայ ժողովրդի վաղվա օրը կերտելը, կյանք մտնելու նախաշեմին առաջին քայլերն ուղղորդելը:

Ծնվել է 1963թ. սեպտեմբերի 28-ին, Ստեփանակերտ քաղաքում, Իվան և ԼուսիկՀամբարձումյանների համերաշխ ու օրինապաշտ մեծ ընտանիքում (5 երեխա): Հայրը տարիներ շարունակ ծառայել է նախկին ԽՍՀՄ իրավապահ մարմիններում, մայրը եղել է համեստ, պատասխանատու, գործին նվիրված դաստիարակ: Արյան կանչի ու ժառանգաբար փոխանցված լավագույն որակների շնորհիվ Անահիտ Պողոսյանը ձեռք է բերել երկու մասնագիտություն. իրավաբան է՝ հմուտ գիտելիքներով և գրականագիտական ճոխ բառապաշարով Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցը ղեկավարող ուսուցիչ:

Նա իր առինքնող հայացքով ու երգեցիկ ձայնով (ունի երաժշտական մեծ ունակություն), ճոխ բառապաշարով, ճարտար խոսքով յուրաքանչյուր գրականության դաս վերածում է դաս-միջոցառման: Կարողանում է աշակերտներին զգալ տալ գեղարվեստական խոսքի հմայքը, գեղարվեստի պատկերավորման հնարների ու արտահայտչական միջոցների բազմազանությունը: Հայոց լեզուն է մայրենիի նվիրյալի տարերքը:

Եվ պատահական չէ, որ թե՛ օլիմպիադաներում, թե՛ շարադրությունների, ասմունքի և թե՛ քաղաքային միջոցառումներում նրա աշակերտները գրավում են առաջնակարգ տեղեր:

Ուր էլ լինի, որտեղ էլ գտնվի, նա իր շուրջը ստեղծում է խաղաղ, կենսարար մթնոլորտ: Միշտ պատրաստակամ արձագանքում է հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, կրթական բարեփոխումների ակտիվ ջատագով է:

Շուրջ 30 տարվա մանկավարժական փորձը, իմաստուն խրատները, անսահման սերն ու նվիրվածությունը սիրած գործի հանդեպ տվել են իրենց հասուն պտուղները: Առհավատչյան՝ նրա աշակերտներն ամենուր հասել են հաջողությունների ու դարձել հասարակության պիտանի և պարզապես՝ լավ մարդիկ:

Տիկին Պողոսյանը Ե. Չարենցի անվան դպրոցի լավագույն աշակերտներից է եղել, աշակերտական տարիներին միշտ աչքի է ընկել և՛ ուսման մեջ, և՛ դպրոցի հասարակական կյանքում:

Դեռ դպրոցական տարիներին ուխտել է՝ դպրոցն ավարտելուց հետո կդառնա մանկավարժ և անպայման կվերադառնա հարազատ դպրոց:

Նա դպրոցն ավարտել է գերազանց գնահատականներով, իսկ համալսարանը՝ կարմիր դիպլոմով և հիմա էլ հաջողությամբ ղեկավարում է մի մեծ կոլեկտիվ:

Նրա ղեկավարության օրոք Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցը ճանաչվել է «Լավագույն դպրոց»: Կրթօջախն ունի մեծ հաջողություններ թե՛ ուսումնական գործում, թե՛ արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումներում:

Ա. Պողոսյանը շատ աշխատասեր ու պահանջկոտ, հմուտ ղեկավար է: Պատասխանատվության վեհ զգացումով, մարդկային բնավորության լավագույն գծերով օժտված ղեկավարը նաև լավ հոգեբան է, կարող է յուրաքանչյուրին ճիշտ հասկանալ և օգնության ձեռք մեկնել: Նա հմայիչ է և՛ խոսքով, և՛ գործով:

Նա նաև հասարակական ակտիվ գործիչ է: Ընտրվել է Արցախի պետական համալսարանի խորհրդի քարտուղար և պատասխանատվության բարձր զգացումով է կատարում այդ պարտականությունը:

Տիկին Պողոսյանը սերտ կապի մեջ է ծնողական հասարակության հետ, հաճախ է հանդես գալիս «Ծնողական համալսարան»-ի նիստերում, ծնողներին հուզող հարցերին տալիս լիարժեք պատասխաններ: Վայելում է մանկավարժական, ծնողական և աշակերտական կոլեկտիվների սերն ու հարգանքը, որոնք էլ իրենց շնորհակալությունն են հայտնում նրան՝ իրենց հանդեպ ունեցած ուշադիր վերաբերմունքի և անաչառ ղեկավար լինելու համար ու սրտանց շնորհավորում են ծննդյան օրվա առթիվ, մաղթում արևշատություն և հետագա բեղմնավոր աշխատանք մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում:

Նա նաև անզուգական մայր է, ինքնամոռաց նվիրումով մեծացնում ու դաստիարակում է սիրասուն դստերը՝ Մարիամին:

Հպարտանալու շատ բան ունի տնօրեն, հայոց լեզվի նվիրյալ Անահիտ Պողոսյանը: Նա բազմիցս արժանացել է պատվոգրերի, դիպլոմների, շնորհակալագրերի: Ստացել է նաև կառավարական պարգև՝ «ԼՂՀ վարչապետի մեդալ»:

Սիրելի Անահիտ Իվանի, Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի ողջ կոլեկտիվը սրտանց շնորհավորում է Ձեր հոբելյանը: Թող Ձեր բարի սիրտը միշտ բերկրանքով ու ավյունով լեցուն լինի: Մաղթում ենք Ձեզ ամենից կարևորը կյանքում՝ ամուր առողջություն, հաջողություններ, երկար տարիների երջանիկ կյանք, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում՝ նորանոր ծեռքբերումներ:

Հաղթանակները թող միշտ Ձեր ուղեկիցը լինեն:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

«Լուսարարը» սրտանց միանում է շնորհավորանքին:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԹՈՂ ԿՅԱՆՔԻԴ ԱՌԱՎՈՏՆԵՐԸ ԱՐԵՎՈՏ ԼԻՆԵՆ

Բոլոր դարաշրջաններում էլ ուսուցիչը մեծ ու պատասխանատու առաքելություն է կատարել:

Նա պատանի անհատի հոգևոր աշխարհը կերտողն է, հասարակության վստահված անձը, որի խնամքին ժողովուրդը հանձնում է ամենաթանկագինը, ամենաարժեքավորը՝ երեխաներին՝ իր հույսը, իր ապագան:

Ամեն տարի սեպտեմբերի 1-ին առաջին զանգի ղողանջների ներքո իր աշխույժ աշխատանքն է սկսում նոր ուսումնականը:

Այո, սեպտեմբերի 1-ը համաժողովրդական տոն է՝ Գիտելիքի օր: Դա նաև Ուսուցչի օրն է, ուսուցչի տոնը:

Յուրաքանչյուր ուսուցիչ, ով իր կյանքի լավագույն տարիները, իր հոգու ջերմությունը, տքնաջան աշխատանքը նվիրել է դպրոցին, արժանի է մեծ ուշադրության և գնահատանքի: Հարգելի ընթերցողներ, ահա թե ինչու ուզում եմ ձեզ պատմել քրոջս (թող այս փաստը ձեզ անսովոր չթվա)՝ Ռիտա Ալթունյանի մասին, ով աշխատում է Հադրութի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում՝ որպես դասավար:

Սիրելի քույրիկ, դու մեկն ես Արցախի ուսուցիչների այն ստվար բանակի զինվորներից, ով անձնվիրաբար մեծ ծառայություն է մատուցում մեր մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Երևի պատահական չէ, որ հենց սեպտեմբեր ամսին ես ծնվել: Սեպտեմբերի 23-ին բոլորում է կյանքիդ 50-րդ գարունը:

Ինչքա՜ն արագ անցան տարիները: Այս պահին հուշերիս կծիկը քանդելով՝ նորից վերապրեցի մեր անցած մանկությունը, հիշեցի այն փոքրիկ, չարաճճի աղջկան, որ անհոգ խաղում էր հայրենի տան բակի սաղարթախիտ թթենու տակ, հիշեցի մեզ՝ երկուսիս, որ իրար հետ մրցելով, մագլցում էինք մեր Ավագ պապի տնկած հսկա կեռասենիները և Արևհատ տատիկի ու մայրիկի համար համով կեռասներ էինք քաղում: Մեր զրնգուն ծիծաղի ձայնը, որ ծառերի կատարներից իր արձագանքն էր գտնում անտառի հեռավոր խորքերում, առայսօր հնչում է ականջներիս մեջ:

Մանկությունը մի երջանիկ ակնթարթ է, հերթով այցելում է բոլորին ու առանց զգուշացնելու անտես հեռանում՝ հետևում թողնելով երանելի հիշողություններ:

Այն ժամանակ երկուսս էլ չգիտեինք, որ ապագայում ուսուցչուհի կդառնանք:

Հայրենի գյուղի միջնակարգը բարձր գնահատականներով ավարտելուց հետո որոշեցիր տարրական դասարանի ուսուցչուհի դառնալ: Երազանքդ կատարվեց:

Արդեն երեսուն տարուց ավելի է, ինչ ավարտելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մեթոդիկայի բաժինը, աշխատում ես ծննդավայրիդ դպրոցում՝ որպես դասավար:

Դու մեսրոպյան գրերն ես ուսուցանում քո սաներին, նրանց տանում թվերի կախարդական աշխարհը, մեր ոսկեղենիկ մայրենիով գերում ու հրապուրում ես աշակերտներիդ:

Դասամիջոցներին քեզ միշտ կարելի է տեսնել սաներով շրջապատված նրանց հետ զրուցելիս կամ էլ նրանց գրավորների տետրերին հակված՝ ուղղումներ անելիս: Անգամ արձակուրդի օրերին նորից նրանց հետ ես: Կարծես անտեսանելի ուժով երեխաները ձգում են քեզ, իսկ դու սիրով ընդառաջ ես գնում:

Գործի բերումով երբ լսում եմ վարածդ դասերը, նորից ու նորից համոզվում եմ, որ կարողանում ես թափանցել աշակերտի հոգին, ճանաչել նրան, անհատական մոտեցում ցուցաբերել նրանցից յուրաքանչյուրի հանդեպ:

Ասում են, որ մարդն իսկապես ապրում է միայն այն ժամանակ, երբ վայելում է ուրիշների համակրանքը:

Մանուկների հանդեպ տածած քո ջերմությունը, քնքշանքն ու սերն անհետ չեն կորչում: Նրանք նույն ձևով սիրում ու համակրում են քեզ: Այդ է վկայում քո սանի՝ փոքրիկ Արենի ասած սրտաբուխ խոսքը. «Մայրիկ, ուզում եմ, որ այս տարի էլ ինձ ընկեր Ալթունյանը դասավանդի»:

Քո հաջողությունների օղակները շաղկապող ոսկե շղթան մեր ծնողների առայսօր ցուցաբերած սերն ու հոգատարությունն է եղել: Լինելով հասարակ աշխատավոր մարդիկ՝ նրանք իրենց հինգ զավակներին դաստիարակել են այնպես, որ կյանքում ապրեն մաքուր, ազնիվ ու պարզ հոգով, լինեն բարյացակամ, համբերատար, հաստատակամ ու աշխատանքի հարգը իմացող:

Սանք հենց այն դրական գծերն են, որոնք պետք է ունենա ուսուցիչն իր սաներին ճիշտ դաստիարակելու, կրթելու, ճիշտ ճանապարհ ցույց տալու համար:

Սիրելի Ռիտա, թե՛ քո աշխատանքային կոլեկտիվում, թե՛ հասարակության մեջ բոլորն էլ ճանաչում, հարգում ու սիրում են քեզ: Ես գիտեմ, որ քո անհանգիստ բնավորության հետևում մի պարզ ու մաքուր հոգի է թաքնված, որը դիմացինին միայն ու միայն լավն ու բարին է կամենում:

Ի խորոց սրտի շնորհավորում եմ քեզ՝ ծննդյանդ 50-ամյա հոբելյանի կապակցությամբ, իմ լավ քույրիկ: Թող 50 թիվը քեզ ամենևին չանհանգստացնի, այլ դառնա քո կյանքի գալիք տասնամյակների ամենահաջող անկյունաքարերից մեկը, քո նոր ճանապարհի առաջին ծաղիկը: Երբ գիշերային լռության մեջ նստես մենակ և 50 տարիների հեռվից մտովի հետադարձ հայացք ձգես անցածդ ճանապարհի վրա, որը հաստափոր գրքի է նման, երբ մեկիկ-մեկիկ թերթես նրա 50 էջերը, այնտեղ կտեսնես ժիր մանուկների ժպտացող դեմքեր, երախտագիտությամբ ու շնորհակալությամբ լեցուն հայացքներ, ծնողներիդ, հարազատներիդ, ընտանիքիդ, դստերդ՝ Էմիլիայի և որդուդ՝ Էրիկի մեծ սերն ու նվիրվածությունը, դու կրկին կհամոզվես, որ ապրած տարիներդ իզուր չեն անցել:

Լինելով մայրենիի նվիրյալ, լավ մարդ՝ բոլորս էլ ուզում ենք, որ քո կյանքի ճանապարհը երկա՜ր շարունակվի, տարիների հետ դառնաս ավելի երիտասարդ:

Մի գրքում կարդացել եմ, որ բնության նման մարդն էլ տարիքի չորս եղանակ ունի, որոնք ամուր շաղկապված են իրար և իմաստավորված են հավերժությամբ:

Գիտեմ, բավական է գրկես սիրասուն թոռնիկիդ՝ Ժորիկին և կյանքիդ գարնանային եղանակը նորից վերադառնում է քեզ մոտ:

Թող կյանքիդ բոլոր առավոտներն արևոտ ու լուսառատ լինեն, միշտ բացվեն ժպիտներով, քեզ մեծ ուժ ու եռանդ պարգևեն, որպեսզի քո դժվարին ու պատասխանատու աշխատանքում հասնես նորանոր հաջողությունների:

Լաուրա ԱԼԹՈՒՆՅԱՆ
Հադրութի շրջ. Մեծ Թաղերի միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի, արտադասարանական եւ արտադպրոցական աշխատանքների կազմակերպիչ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ՝ ԱՆՁԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Մանկապարտեզում անձի կայացման ու դաստիարակության լուրջ քայլեր են կատարվում՝ դրվելով անձի ձևավորման, ես-ի հիմքը: Ուստի կարելի է ասել, որ մանկապարտեզն այսօր մեզ համար մի յուրօրինակ ճակատ է, որտեղ յուրաքանչյուր աշխատող՝ դայակից մինչև տնօրեն, մի յուրօրինակ առաքելություն է կատարում՝ դաստիարակելով մեր երկրի ապագա մորը, տիրոջը և պաշտպանին: Ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ հենց այդ գիտակցումով էլ աշխատում են Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզում՝ տնօրեն Լարիսա Ներսիսյանի ղեկավարությամբ:

Տարիների վաստակ ունեցող տնօրենը, ով նույնիսկ պատկառելի տարիքում անգամ երիտասարդական ավյունով է աշխատում, կարողացել է հասնել այն բանին, որ իր տնօրենության տակ գործող մանկապարտեզը ոչ միայն թոթափել է պատերազմի հետքերը, այլ նաև նոր, ժամանակակից պարագաներով հագեցած տեսք է ստացել, որտեղ մեր երեխաներն անց են կացնում հետաքրքիր և հաճելի ժամեր: Այստեղ ստեղծված են բոլոր պայմանները, որ մեր երեխաները դեռ մանկուց իրենց հոգում չզգան ու չկրեն կյանքի դառնությունները, իրենց թոթովախոս լեզվով միայն գովերգեն լավն ու բարին և հավատան դրան: Հավատան, որ մի գեղեցիկ օր իրենց հայրերի ու պապերի թափած արյամբ ազատագրված երկիրն, իրոք, շեն ու ծաղկուն է լինելու՝ ձերբազատված բոլոր խնդիրներից:

Երբ մանկապարտեզի տնօրենը ժպիտը երեսին ասում է, որ «իր երեխաներն ամենագեղեցիկն են», խոսում է այն մասին, թե նա ինչ նվիրումով է վերաբերվում իր աշխատանքին: Եվ աշխատանքի մեջ սեր ու նվիրվածություն դնելուց զատ՝ խստապահանջություն է դրսևորում կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի հանդեպ: Իր խստապահանջությունից անմասն չի մնում նաև հենց ինքը... Նրա համար օրը սկսվում է մանկապարտեզով և ավարտվում՝ մանկապարտեզով: Անգամ անձնականից ու առողջությունից վեր է դասում մանկապարտեզի բարեկարգությունը՝ սկսած սանիտարահիգիենիկ աշխատանքներից, ավարտած՝ դաստիարակների պարապմունքներով:

Եվ ահա, ակնառու է նաև արդյունքը. մսուր՝ փոքրերի, իսկ այս տարի՝ մեծերի խումբ հաճախող աղջիկս՝ Մարիամ Շահջահանյանը ամեն շաբաթ մի նոր ոտանավոր, երգ ու պար է մեզ՝ ծնողներիս ցուցադրում, անգամ ստիպում իր հետ մարմնամարզություն անել՝ ասելով, որ դա օգտակար է մեր առողջությանը: Եվ այս ամենը՝ շնորհիվ դայակ-դաստիարակչուհիների (Իրինա Գրիգորյան, Ջուլիա Ենգիբարյան, Ինա Բալայան, Կարինե Պետրոսյան, Իրինա Թադևոսյան, Նարինե Ավագյան, Վարդի տատիկ, Լաուրա Թավրիզյան, Իրինա Թադևոսյան) հրաշալի աստղաբույլի: Նրանք կարողանում են երեխաներին ըստ արժանվույն պատրաստել երկրորդ կրթօջախ ոտք դնելու քննությունհաշվետվությանը, իրենք էլ նրանց հետ հավասար անցնելով այդ փորձությունը, մերթ փոքրերի հետ փոքրանալով ու մերթ էլ նրանց քմահաճույքներով առաջնորդվելով:

Մանկապարտեզն, ինչ խոսք, անձի կայացման ու դաստիարակության առաջին և լուրջ հիմքն է, որին էլ հետամուտ է Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզի անձնակազմը: Որպես ծնող՝ իմ երախտագիտությունն եմ հայտնում նրանց, քանզի մեզ հետ հավասար բարեխղճորեն և նվիրումով են կազմակերպում մեր երեխաների առօրյան ու դաստիարակության հետ կապված հարցերը: Թող Աստծո Զորավոր Աջը միշտ հովանի լինի նրանց և նրանց ընտանիքներին:

Ծնող՝ Երազ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԵԿՏԱՐԴ ԿՈՒՄ-ԿՈՒՄ

Կարծես երեկ էր, այլ ոչ թե 45 տարի առաջ, երբ գեղեցիկ արտաքինով, վառվռուն դեմքով, գանգուր մազերով մի աղջնակ, որ Շուշիի մանկավարժական ուսումնարանի շրջանավարտն էր, ծաղկեփունջը ձեռքին, ուսուցիչ ծնողների ուղեկցությամբ մոտեցավ դպրոցի շեմին, սանդուղքներով վեր բարձրացավ, մտավ հին ու անշուք մի սենյակ, որն «Ուսուցչանոց» ցուցանակն էր կրում: Մենք՝ այն ժամանակվա աշակերտներս, նույնպես թռվռալով ուղեկցեցինք նորաթուխ ուսուցչուհուն: Իսկ այսօր մեր կողքին է մազերը ճերմակած, թոշակային տարիքի հասած, բարետես արտաքինով մի ուսուցչուհի, որից մենք ափսոսանքով ենք բաժանվում:

Նա, որպես տարրական դասարանների ուսուցչուհի, իր աշխատանքային գործունեությունը ծավալել է Քերթի և Քարահունջի դպրոցներում:

Իմ խոսքի այս փոքրիկ նախաբանի հերոսը մեր գործընկեր, բազմավաստակ ուսուցչուհի Ալվինա Գևորգյանն է, որին մենք վաստակած հանգստի ճամփեցինք:

Մի պահ ցավ ես զգում, երբ գիտելիքների մեծ պաշարով թոշակի են անցնում եռանդուն մանկավարժները: Այսպիսին այսօր տիկին Գևորգյանն է, նա, ով տասնամյակներ շարունակ նեկտարը կում-կում տվել է սաներին:

Յուրաքանչյուր հրաժեշտի պահ դժվար է: Սակայն երբ մտաբերում ենք մեր օրինակելի և բազմավաստակ ուսուցչուհու մանկավարժական կյանքը, որ բազմաթիվ ուրախ ելևէջներով է անցել, մի տեսակ հպարտություն ենք ապրում նրա արած-թողածի համար, և արցունքը փոխարինվում է խինդ ու ծիծաղով:

Նա լավ գիտի դեպի մանուկների սրտերը տանող ճանապարհը, որի շնորհիվ էլ շատ կարճ ժամանակում նրանց համար դարձել էր երկրորդ մայր:

Որ տիկին Գևորգյանը լավ ուսուցչուհի է, ես համոզվել եմ նրա վարած բազում դասեր լսելով: Նա հրաշալի գիտի տարրական դասարաններում դասավանդվող բոլոր առարկաների ծրագրային նյութերը և դրանց դասավանդման մեթոդները: Հետևաբար, այսօր նա կարող է հպարտորեն ասել. «Կյանքս նվիրել եմ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին»:

Ալվինա Գևորգյանը միշտ աշխատել է հոգու թելադրանքով: Եվ իրոք, նա իր հոգու լույսն ու ջերմությունն անմնացորդ նվիրել է հարազատ դարձած երկու գյուղերի դպրոցների հարյուրավոր աշակերտների, իր շուրջը սփռելով ամենօրյա սեր ու երջանկություն, խինդ ու բերկրանք:

Մտքի և հոգևոր անդաստանի գիտելիքների այդ անխոնջ սերմնացանն իր կյանքի նպատակը տեսնում էր սաների մաքրամաքուր և հմայիչ աշխարհում: Նա ասմունքում է, երգում, պարում, ստեղծագործում: Զրուցասեր է, կենսախինդ և հոգու մեջ ոչինչ չթաքցնող, մի խոսքով՝ լավ մայր, լավ կին, լավ հարս և նվիրված ընկեր: Նրա մոտ անհնար է տխրել, ձանձրանալ, նրա խոսքերը համոզելու ուժ ունեն, կարողանում է թափանցել մարդկանց սրտերը, հարկ եղած դեպքում՝ կարեկցել, ոգևորել, հուսադրել ու սատարել:

Բարի է, միշտ ուզում է օգնել թույլին, անկարողին: Նա կյանքով լեցուն է ու լավատես, և ցանկանում ենք, որ այդպես էլ մնա իր ողջ կյանքում:

Ի սրտե շնորհավորում ենք մեր սիրելի գործընկերուհուն՝ վաստակած հանգստի անցնելու կապակցությամբ և մաղթում առողջություն, հաջողություններ ու երջանիկ օրերի բազմապատկում:

Սուսաննա ԲԵԳԼԱՐՅԱՆ
Մարտունու շրջ. Քարահունջ գյուղի հիմն. դպրոցի դասավար

ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

5☜ Երբ աշակերտներին մղում ենք այսօրինակ գործունեության, ապա նրանց մղում ենք դեպի ինքնուրույնության, դեպի սեփական կարծիքն արտահայտելուն: Իսկ սեփական կարծիք կարող է արտահայտել զարգացած խոսք ու միտք ունեցող աշակերտը: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այսօր մեր աշակերտների ամենաթույլ տեղը թերզարգացած խոսքն է: Պետք է ողջ դասապրոցեսն օգտագործենք ռացիոնալ, մանրակրկիտ աշխատանք կատարենք բնագրի վրա, վերլուծենք և քննենք բոլոր բառերը, պատկերավոր արտահայտությունները: Համակարգված ու ամբողջական աշխատանք տանենք աշակերտների լեզվամտածողության, ինքնուրույն խոսքի զարգացման ուղղությամբ: Այսպես, ծրագրով 10-րդ դասարանում նախատեսված է անցնել Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը: Թեմայի հետ միասին դասարանին առաջադրում եմ հետևյալ բնույթի աշխատանքներ.

1. Գրել *ասպախումբ, դղյակ, վաղորդյան, մշուշ, նժույգ, հեծյալ* բառերի հոմանիշները:

2. Բացատրել *կոչնակ, անխոնջ, բուրվառ, խնկարկել, ամեհի, սքողել* բառերը, դրանք գործածել նախադասությունների մեջ:

3. Բնագրից գտնել կազմությամբ բարդ բառերը, կազմել նոր բառեր դրանց արմատներով:

4. Բնագրից դուրս գրել մակդիրները՝ մակդիրակիր բառերի հետ:

5. Բնագրից դուրս գրել համեմատություններ:

6. Բնագրից դուրս գրել արդի հայերենում չօգտագործվող բառեր ու արտահայտություններ, դրանք փոխարինել ժամանակակից ձևերով:

7. Դուրս գրել դուր եկած նկարագրություններն ու պատկերները:

Կարելի է դասարանը բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի տալ առանձին հանձնարարություն: Կարելի է նույնիսկ տալ նույն հանձնարարությունը և անցկացնել մրցման կարգով: Ի դեպ, դասարանում խմբերով աշխատանքը տալիս է գոհացուցիչ արդյունք, աշակերտները ձգտում են ներդնել իրենց գիտելիքները, իրենց խոսքը: Կամ էլ առաջադրանքները գրում եմ թերթիկների վրա և աշակերտներին աշխատեցնում զույգերով: Այդ աշխատանքները կատարելիս աշակերտներն օգտվում են իրենց բառարաններից (դասարանի համարյա թե բոլոր աշակերտները ձեռքի տակ ունեն հոմանիշների բառարաններ): Աշխատանքի հաջորդ փուլում առաջադրում եմ նախադասությունների մեջ օգտագործել բնագրից դուրս գրած բառակապակցությունները, մակդիրները: Օրինակ՝ սքանչելի ալեկոծություն, վաղորդյան անուշահոտություն, մարգարտյա կաթիլներ, սպիտակափառ գագաթ և այլն:

Հատուկ աշխատանք եմ տանում նաև կազմությամբ բարդ բառերի դուրսգրման և դրանց բաղադրիչներով նոր բառեր կազմելու ուղղությամբ:

Խոսքի զարգացման նպատակով օգտագործում եմ բազմաթիվ մեթոդներ՝ դրանք զուգորդելով և համակցելով իրար: Այսպես՝ աշակերտները սովորաբար դժվարանում են չափածո ստեղծագործություններն արձակ վերարտադրելիս, երկխոսություններով հարուստ նյութը երրորդ դեմքով պատմելիս: Ուսուցումը դյուրացնելու նպատակով առաջարկում եմ չափածո ստեղծագործության յուրաքանչյուր քառատողից առանձնացնել հատվածի հիմնական միտքն արտահայտող բառերն ու բառակապակցությունները, նրանցով կազմել նախադասություններ: Ակամա ամեն մեկը յուրովի վերարտադրում է նյութի բովանդակությունը: Երբեմն էլ քառատողի բովանդակությունն արտահայտում ենք արձակ, պատմողական նախադասություններով՝ օգտագործելով հոմանիշներ, փոխելով շարադասությունը:

Բանավոր խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման նպատակին եմ ծառայեցնում հոմանիշների ուսուցումը: Հոմանիշները թվարկելիս ընդգծում եմ այն բառը, որը տվյալ շարքում անծանոթ է երեխաներին: Երեխաների ուշադրությունը հրավիրում եմ այդ բառերի վրա: Հաջորդ տեքստերն անցնելիս հանդիպում են հենց այն ընդգծված բառերին, որոնց նախորդ ժամին ծանոթացել էին: Պարզ է, որ բառն արդեն անծանոթ չէ: Բավական է միայն հիշեցնել, ապա հոմանիշների շարքում մեկ ուրիշ անծանոթ բառ բացատրել ու այսպես շարունակ: Ծանոթացումը հոմանիշներին շարունակում եմ նաև հայոց լեզվի ժամերին, երբ այդ բառերն ուսումնասիրվում են իրենց տարբեր քերականական հատկանիշներով: Փաստորեն նույն բառին աշակերտը հանդիպում է մի քանի անգամ. մեկ՝ որպես անծանոթ բառ, մեկ՝ որպես հոմանիշ, մեկ՝ որպես ուղղագրական դժվարություն ունեցող բառ, շարահյուսական միավոր կամ խոսքի մաս: Սակայն ուսուցումը սրանով չի ավարտվում: Ուշադիր հետևում եմ աշակերտների խոսքին էքսկուրսիաների ժամանակ: Հարկ եղած դեպքում հիշեցնում եմ, որ օգտագործեն այս կամ այն բառը, դարձվածքը, թևավոր խոսքը: Այսպես ուսուցումը դառնում է առավել գործնական, կենդանի:

Հետաքրքիր աշխատանք է նաև բոլոր բառակապակցություններով մեկ նախադասություն կազմելը: Սա, իհարկե, պահանջում է մտքի լարում և կողմնորոշվելու կարողություն: Բանավոր խոսքի զարգացման ակտիվ միջոց է խոսքի և կերպարվեստի համակցված օգտագործումը, որը խորացնում է տպավորությունը, սրում զգացմունքները: Այսպես՝ Հ. Սահյանի «Անտառում» բանաստեղծությունը, Ստ. Զորյանի «Պապն ու թոռը» պատմվածքն անցնելիս աշակերտներին հանձնարարում եմ ոչ միայն գրել շարադրություն՝ «Անտառում» թեմայով, այլ նաև նկարել անտառ կամ բնության մի գողտրիկ անկյուն: Եվ այն աշակերտները, ովքեր ունեն հարուստ բառապաշար, ստեղծագործական երևակայություն, կարողանում են այդ ամենը գունավոր մատիտների միջոցով պատկերել թղթի վրա: Նկարն աշակերտի խոսքը դարձնում է պատկերավոր:

Աշակերտների բառապաշարի որակական կազմի հարստացման համար աշխատում եմ ապահովել բառապաշարի բազմակողմանիությունն ու թեմատիկ բազմազանությունը: Աշխարհը գլխապտույտ արագությամբ առաջ է շարժվում, և դպրոցը՝ որպես հանրային կառույցներից մեկը, չի կարող չարձագանքել նրանում կատարվող փոփոխություններին: Տեղեկատվական բազմաթիվ միջոցներն անհավանական թվացող հնարավորություններ են բացել այսօրվա աշակերտի առջև, և նրա բառապաշարն օրեցօր հարստանում է նորանոր բառերով ու տերմիններով:

Աշակերտների բառապաշարի հարստացման նպատակին եմ ծառայեցնում պատկերավորման-արտահայտչական միջոցների ուսուցումը: Մեծ տեղ եմ հատկացնում գրական ստեղծագործություններում գործածված պատկերավորման միջոցներին, հատկապես՝ մակդիրներին: Աշխատում եմ այնպես անել, որ աշակերտներն ընկալեն մակդիրների հավելյալ նրբիմաստները, խոսքին հուզականություն հաղորդելու դրանց մեծ հնարավորությունը: Այսպես, նոր ծրագրով 7-րդ դասարանում անցնում ենք Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Բանաստեղծությունն ուսուցանելուց հետո մեկ ժամ տրամադրում եմ աշակերտների բառապաշարի հարստացմանը, կապակցված խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը: Բանավոր խոսքի զարգացման տեսակետից Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը դասական նմուշ է: Ողջ բանաստեղծությունը համեմված է մակդիրներով: Աշակերտները շատ հեշտությամբ ու մեծ հաճույքով բանաստեղծությունից դուրս են գրում մակդիրներն իրենց մակդիրակիր բառերի հետ: Այնուհետև պահանջում եմ այդ նույն մակդիրները գործածել իրենց սեփական նախադասություններում: Առաջարկում եմ բանաստեղծության մոտիվներով նկարել որևէ նկար, իսկ որպես տնային հանձնարարություն տալիս եմ շարադրություն՝ «Հայաստանը Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ» թեմայով, որտեղ աշակերտները գործածում են իրենց դուրս գրած մակդիրներն ու կազմած նախադասությունները:

Աշակերտների խոսքի զարգացման մյուս կարևոր միջոցը գեղարվեստական երկերի ընթերցումն է: Հետևողական և նպատակային աշխատանքը բնագրի վրա սկսում եմ նրանից, որ ամեն ուսումնական տարվա վերջում աշակերտներին հանձնարարում եմ հաջորդ տարվա համար նախատեսված արտադասարանային ընթերցանության թեմաները, որ արձակուրդի օրերին երեխաները կարդան: Արտադասարանային ընթերցանության ժամերն առավել հետաքրքիր անցկացնելու համար նախօրոք հանձնարարում եմ քննարկվելիք գիրքը:

Արտադասարանային ընթերցանության դասին պատրաստվում են բոլոր աշակերտները, որովհետև այն աշակերտը, ով բնագիրն ընթերցած չի լինում, այդ դասին չի կարող մասնակցել: Պատճառը հետևյալն է. օգտագործում եմ այսպիսի մի մեթոդ: Առաջին աշակերտը թղթի վրա սկսում է գրել բնագրի սյուժեն: Նա գրում է մի քանի նախադասություն, հաջորդ աշակերտը, եթե ընթերցել է երկը, կարողանում է ընկերոջ միտքը շարունակել: Այսպես մի ամբողջ դասապրոցեսում աշակերտները հասցնում են գրել երկի բովանդակությունը, իհարկե, շատ համառոտ: Իսկ նրանք, ովքեր չեն ընթերցել, կամա թե ակամա հրաժարվում են խաղին մասնակցելուց: Հասկանալի է՝ դրանից հետո նրանք ստիպված սկսում են գիրք ընթերցել:

Իմ դասերի անբաժանելի մասն են կազմում բանավեճերը: Դա ևս նպաստում է աշակերտների խոսքի զարգացմանը: Գրականության դասն առանց բանավեճի պատկերացնել չեմ կարող: Աշակերտները դառնում են անկեղծ, ինքնաբուխ, կարողանում են օգտագործել դիպուկ տողեր, թևավոր արտահայտություններ, իմաստուն ասույթներ գրականության իրենց անցած դասերից:

Աշակերտների խոսքի զարգացմանը հետևում եմ ոչ միայն գրականության, այլ նաև հայոց լեզվի դասերին: Աշխատում եմ ոչ միայն հետևողականորեն ճշտել աշակերտների բանավոր խոսքի թերությունները, այլև նրանց համար ստեղծել արտահայտվելու առիթներ՝ այդ «շատախոսությունը» ծառայեցնելով թե՛ բանավոր խոսքի զարգացմանը և թե՛ լեզվական նյութի գիտակցական յուրացմանը:

Այսպիսով, մեզանից յուրաքանչյուրն ուսուցման ընթացքում պետք է դրսևորի ստեղծագործական մոտեցում, նպատակասլաց հետևողականություն, որոնի և գտնի աշակերտների ինքնուրույն միտքը խթանող մեթոդական թարմ ու հետաքրքրական ձևեր, և արդյունքում մեր աշակերտները կունենան զարգացած գրավոր և բանավոր խոսք:

Լյուբա ՄԱՅԻԼՅԱՆ
Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

Խոսք հիշատակի

ՍԻՐՈՎ ԿՀԻՇԵՆ

Հոգուս խորքում մեծ ցավ ապրեցի, երբ իմացա, որ կյանքի 75-րդ տարում իր մահկանացուն կնքեց մեր սիրելի ուսուցչուհիներից Ռազմիկ Շաքարյանը: Մահացել է հայրենի եզերքից հեռու՝ ուկրաինական Խարկով քաղաքում...

Եվ մինչ գրասեղանիս առաջ նստած, մտմտում էի գրել հիշատակի խոսք, որը կլինի նաև իմ շատ սերնդակիցների երախտագիտության խոսքը՝ ուղղված մեր դպրոցական կյանքի առաջին տարիների առաջին ուսուցչուհիներից մեկին, մի պահ մտովի վերապրեցի քաղցրահուշ, անցած ու անվերադարձ կանաչ-կարմիր օրերը...

Մանկավարժական աշխատանքիս առաջին սրտահույզ քայլերը մեր հարազատ կրթօջախում նույնպես անցել են սիրելի ուսուցչուհու աչքի առաջ, նրա ներկայությամբ և, անկասկած, նրա օգտակար դասխորհուրդներով:

Ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը՝ Ռազմիկ Շաքարյանը որպես դասվար աշխատանքի է անցել Սխտորաշեն գյուղի 8-ամյա դպրոցում, իսկ երկու տարի անց տեղափոխվել է հարազատ Ճարտար գյուղ և աշխատանքի նշանակվել Գյուղե Ճարտարի 8-ամյա դպրոցում: Սկզբնական շրջանում ռուսաց լեզվի ուսուցչի պահանջարկ կար, և նա մեզ՝ տարրական դասարաններում սովորողներիս, ուսուցանում էր ռուսաց լեզու: Մանկության հիշողություններն ուժեղ են տպավորվում. լավ հիշում եմ՝ դասարան էր մտնում և ժպտադեմ ռուսերենով մեզ ողջունում: Նա առաջին իսկ օրից գտավ մեր սրտերի ճանապարհը: Նրա մեջ տեսանք լույսի, իմաստության անսպառ ակունքը: Նրա միջոցով ճանաչեցինք ռուս գրականության հսկաներ Ա. Ս. Պուշկինին, Լ. Ն. Տոլստոյին, Մ. Յու. Լերմոնտովին: Ծանոթացանք նաև հայ հեղինակների ռուսերեն թարգմանված մի շարք ստեղծագործությունների:

Հետագայում ընկեր Շաքարյանին նշանակեցին տարրական դասարաններում դասվար-ուսուցչուհի: Մատաղ սերնդին ուսուցանեց ու դաստիարակեց, նրա մեջ սեր սերմանեց դեպի մեր հազարագանձ մայրենին, բացահայտեց թվաբանության հրաշագեղ աշխարհի գաղտնարանները: Սովորեցրեց ազգային հոգեպարար երգեր ու պարեր, կազմակերպեց բազմաթիվ մարզախաղեր, արշավներ, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ: Համատեղության կարգով նաև դպրոցի ավագ ջոկատավարի պարտականություններն էր կատարում:

Հետագայում Ռ. Շաքարյանի տասնյակ սաներ սրտի թելադրանքով, հոգու մղումով ընտրեցին ուսուցչի մասնագիտությունը: Նրա ավագ դուստրը՝ Զարինե Դանիելյանը, այսօր հարազատ Գյուղե Ճարտարի Արամայիս Հայրապետյանի անվան հ. 3 հիմնական դպրոցում աշխատում է որպես տարրական դասարանների ուսուցչուհի և սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ: Իսկ թոռնիկներից Ռուզաննան, Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջում երիտասարդ դասախոսների շարքերն է համալրել:

Ռ. Շաքարյանը `հինգ դուստր և մեկ ուստր է ծնել ու սնել: Մինուճար որդին՝ Արթուրը, Արցախյան ազգային-ազատագրական շարժմանը զինվորագրվել է առաջին իսկ օրերից և ակտիվորեն մասնակցել ազատագրական շատ մարտերի:

Խոհերս ուզում եմ ավարտել չափածո տողերով.

...Տարիներն ինչքա՜ն
Թևածեն, հոսեն,
Ձեր բյուր սաները՝
Միշտ սիրով պիտի
Ձեր հանդեպ խոսեն:
Դուք, որ հոգեպես
Միշտ զինել եք մեզ ,
Հավերժությո՜ւն Ձեզ...

Ձեր բոլոր երախտագետ սաների, գործընկերների անունից՝

Թովմիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
գ. Ճարտար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ:**

Մրցույթին մասնակցելու հայտի գրավոր դիմումը և փաստաթղթերի փաթեթը՝ սոսնձված ծրարով, Արցախի գիտական կենտրոն է ներկայացնում հետազոտական խմբի ղեկավարն անձամբ (աշխատանքային օրերին՝ ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Ստեփանակերտ, Տիգրան Մեծի 10) կամ փոստով (Ստեփանակերտ, Տիգրան Մեծի 10)՝ մինչև հոկտեմբերի 20-ը:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ինտերնետային կայքում ***(www.edu.nkr.am):***

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Արցախի գիտական կենտրոնում, աշխատանքային օրերին՝ ժամը 14:00 - 17:00, հեռ. 047-95-80-93:

ՄՐՑՈՒՅԹ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Հայտարարվում է մրցույթ՝ ԼՂՀ Հադրութի, Ասկերանի, Մարտունու շրջանների ներքոհիշյալ գյուղերի դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Հադրութի շրջան

Հադրութի մ/դ	- դաստիարակ (հաստիք).
Վանքի մասնաճյուղ	- տարրական դասարանի ուսուցչուհի, 11 ժամ.
Ակնաղբյուրի մ/դ	- աշխարհագրություն, 8 ժամ.
Առաքելի մ/դ	- քիմիա-7 ժամ.
Արևշատի հ/դ	- զինղեկ 1 հաստիք-քիմիա կենսաբանություն-17 ժամ., անգլերեն լեզու-16 ժամ. ռուսաց լեզու-23 ժամ.
Բանաձորի հ/դ	- ռուսաց լեզու-18 ժամ, անգլերեն լեզու-16 ժամ.
Նորաշենի հ/դ	- ռուսաց լեզու-14 ժամ.
Ծակուռու մասնաճյուղ	-դասվար-11 ժամ
Ծամձորի մասնաճյուղ	-քիմիա-կենսաբանություն 10 ժամ

Ասկերանի շրջան

Աստղաշենի մ/դ	- ֆիզկուլտուրա-19,5 ժամ (կրկնակի).
Կարմիր գյուղի մ/դ	-աշխարհագրություն-8 ժ

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան հոկտեմբերի 15-ից 19-ը ընկած ժամանակահատվածում՝ տեղը, ժամը և այլ տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Հայտարարվում է մրցույթ՝ Քաշաթաղի շրջանի ներքոհիշյալ գյուղերի դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար

Տիգրանավան	- դասվար-1 հաստիք, ֆիզկուլտուրա-11 ժ, հայոց լեզու-6 ժ
Իշխանաձոր	- դասվար-2հաստիք, ռուսաց լեզու-19 ժ, ֆիզկուլտուրա-14 ժ հայոց լեզու և գրականություն-23 ժ
Բազմատուս	- դասվար-1 հաստիք, բնագիտություն-2 ժ, օտար լեզու-6 ժ, աշխարհագրություն-4ժ, կենսաբանություն-4 ժ, քիմիա-3 ժ, հայոց պատմություն-6 ժ, շախմատ-2 ժ, ֆիզկուլտուրա-11, ֆիզիկա-5 ժ
Միրիկ	- դասվար-1 հաստիք, օտար լեզու-10 ժ, ֆիզկուլտուրա-15 ժ,
Գանձա	- զինղեկ-0,5 հաստիք, ռուսաց լեզու-10 ժ, մաթեմատիկա-14 ժ, ֆիզկուլտուրա-9 ժ
Բերձորի հ. 1	- զինղեկ-1 հաստիք, հայոց լեզու-21 ժ, ռուսաց լեզու-22 ժ
Բերձորի հ. 2	- զինղեկ-1 հաստիք
Գետամեջ	- ֆիզկուլտուրա-16 ժ, մաթեմատիկա-22 ժ, քիմիա-8 ժ, կենսաբանություն-6 ժ
Միջնավան	- պատմություն-23 ժ, հայոց եկեղեցու պատմություն-7 ժ
Վարդուտ	- օտար լեզու-10 ժ, ռուսաց լեզու-16 ժ, աշխարհագրություն-7 ժ, քիմիա-7 ժ, կենսաբանություն-8 ժ
Աղանուս	- դասվար-1 հաստիք, պատմություն, հասարակագիտություն-10 ժ, օտար լեզու-8 ժ, հայոց եկեղեցու պատմություն-3 ժ, քիմիա, կենսաբանություն-11 ժ
Արտաշավի	- դասվար-1 հաստիք
Դիցմայրի	- դասվար-1 հաստիք, ռուսաց լեզու-14 ժ, զինղեկ-1 հաստիք, հայոց լեզու-22 ժ, ֆիզկուլտուրա-14 ժ, օտար լեզու-15 ժ, կենսաբանություն, բնագիտություն-8 ժ, մաթեմատիկա-9 ժ, ֆիզկուլտուրա-4 ժ
Երիցվանք	- դասվար-3 հաստիք, հայոց լեզու և գրականություն-27 ժ
Մոշաթաղ	- դասվար-1 հաստիք, ինֆորմատիկա-6 ժ
Աղավնատուն	- դասվար-1 հաստիք, զինղեկ-1 հաստիք, ֆիզկուլտուրա-1 հաստիք
Սուս	- քիմիա-6 ժ, աշխարհագրություն-7 ժ, ֆիզկուլտուրա-6 ժ, զինղեկ-1 հաստիք
Մշենի	- անգլերեն-10 ժ, զինղեկ-1 հաստիք
Գողթանիկ	- կենսաբանություն-8 ժ, քիմիա-7 ժ, ֆիզկուլտուրա-12 ժ, օտար լեզու-12 ժ
Ղազարապատ	- օտար լեզու-12 ժ, քիմիա-6 ժ, կենսաբանություն-6 ժ, ֆիզկուլտուրա-12 ժ, ռուսաց լեզու-12 ժ աշխարհագրություն, բնագիտություն-8 ժ
Տանձուտ	- ֆիզկուլտուրա-5 ժ, մաթեմատիկա-5 ժ, հայոց լեզու և գրականություն-19 ժ, պատմություն-12 ժ, հասարակագիտություն-2 ժ, զինղեկ-1 հաստիք
Ծիծեռնավանք	- զինղեկ-1 հաստիք, մաթեմատիկա-11 ժ
Կովսական	- պատմություն, հասարակագիտություն-23 ժ, հայոց լեզու և գրականություն-23 ժ, հայոց եկեղեցու պատմություն-9 ժ, աշխարհագրություն-11 ժ, զինղեկ-1 հաստիք, մաթեմատիկա, ինֆորմատիկա-18 ժ
Կումայրի	- պատմություն, հասարակագիտություն-22 ժ, ռուսաց լեզու-27 ժ, օտար լեզու-10 ժ
Մովսեսաշեն	- քիմիա-4 ժ, կենսաբանություն-4 ժ, ռուսաց լեզու-11 ժ, զինղեկ-0,5 հաստիք, հայոց լեզու և գրականություն – 17 ժ, օտար լեզու-8 ժ
Հերիկ	- հասարակագիտություն, ՀԵՊ-18 ժ, օտար լեզու-10 ժ, հայոց լեզու-16 ժ, կենսաբանություն-6 ժ, քիմիա-4ժ, աշխարհագրություն-5 ժ, դասվար-2 հաստիք, զինղեկ-1 հաստիք, ֆիզկուլտուրա-12 ժ
Ուռեկան	- դասվար-1 հաստիք, հայոց լեզու-28 ժ, ռուսաց լեզու-22 ժ, զինղեկ-1 հաստիք
Շալուա	- զինղեկ-0,5 հաստիք, ֆիզկուլտուրա-9 ժ, օտար լեզու-8 ժ, ռուսաց լեզու-12 ժ, պատմություն-15 ժ, աշխարհագրություն-3 ժ, քիմիա, կենսաբանություն- 8 ժ, մաթեմատիկա-6 ժ
Դրախտաձոր	- ռուսաց լեզու-13 ժ, օտար լեզու-8 ժ, մաթեմատիկա-5 ժ, քիմիա-4 ժ, կենսաբանություն-4 ժ, հայոց լեզու և գրականություն-18 ժ, դասվար-1 հաստիք
Սոնասար	- պատմություն-7 ժ, օտար լեզու-8 ժ, զինղեկ-0,5 հաստիք, աշխարհագրություն-5 ժ
Արվական	- զինղեկ-0,5 հաստիք, քիմիա-2 ժ, կենսաբանություն-2 ժ, դասվար-1 հաստիք, օտար լեզու-6 ժ
Այգեհովիտ	- զինղեկ 1 հաստիք, հայոց լեզու և գրականություն-14 ժ, մաթեմատիկա-6 ժ, ֆիզիկա-13 ժ, աշխարհագրություն-7 ժ, ֆիզկուլտուրա-14 ժ
Մարտունաշեն	- պատմություն, հասարակագիտություն-11 ժ, օտար լեզու-12 ժ
Ալաշկերտ	- դասվար-2 հաստիք, աշխարհագրություն-8 ժ, ֆիզկուլտուրա-16 ժ
Արծվաշեն	- դասվար-1 հաստիք, զինղեկ-1 հաստիք, հայոց լեզու և գրականություն-20 ժ, քիմիա, կենսաբանություն-11ժ , պատմություն, հասարակագիտություն-11 ժ, աշխարհագրություն-5 ժ, ֆիզկուլտուրա-6 ժ
Կերեն	- զինղեկ-1 հաստիք, ռուսաց լեզու-12ժ, օտար լեզու-8 ժ, քիմիա-4 ժ, ֆիզկուլտուրա-9 ժ, պատմություն, հասարակագիտություն-10 ժ, կենսաբանություն-4 ժ, շախմատ-2 ժ
Լեռնահովիտ	- զինղեկ-1 հաստիք, ֆիզիկա-8 ժ, մաթեմատիկա-12 ժ, ֆիզկուլտուրա-12 ժ, օտար լեզու-14 ժ, ինֆորմ.-4 ժ
Աղավնո	- զինղեկ-1 հաստիք, ֆիզկուլտուրա-10 ժ
Հակարի	- զինղեկ-1 հաստիք, օտար լեզու-8 ժ
Ծաղկաբերդ	- զինղեկ-1 հաստիք, հայոց լեզու և գրականություն-24 ժ, աշխարհագրություն-6 ժ
Սարատակ	- զինղեկ-1 հաստիք, դասվար-1 հաստիք
Աղաձոր	- զինղեկ-1 հաստիք, ռուսաց լեզու-8 ժ, պատմություն, հասարակագիտություն-22 ժ, աշխարհագրություն, ֆիզիկա-17 ժ, դասվար-1 հաստիք
Ծոբաձոր	- զինղեկ-1 հաստիք, քիմիա, կենսաբանություն-4 ժ
Քաշունիք	- զինղեկ 1 հաստիք, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա-10 ժ, օտար լեզու-6 ժ, քիմիա, կենսաբանություն-4 ժ
Վան	- պատմություն, հասարակագիտություն-19 ժ, ՀԵՊ-5 ժ, աշխարհագրություն, բնագիտություն-8 ժ, կենսաբանություն-6 ժ, քիմիա-6 ժ
Վակունիս	- ռուսաց լեզու-10 ժ, պատմություն-13 ժ, զինղեկ-0,5 հաստիք
Քարեգահ	- ֆիզկուլտուրա-15 ժ, դասվար-2 հաստիք
Վաղազին	- ֆիզկուլտուրա-9 ժ, դասվար-1 հաստիք
Վուրգավան	- զինղեկ-1 հաստիք, ֆիզիկա-8 ժ, ֆիզկուլտուրա-12 ժ, մաթեմատիկա-20 ժ

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում՝ տեղը, ժամը և այլ տեղեկություններ իմանալու դիմել համապատասխան դպրոց:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի թիվ 25-26-ում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատետեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղ

   թերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

ԼՈՒՍԱՐԱՐ
Ի տեղ խմբագրի՝
Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 28.09.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: